

ՓԵՍԵՐՈՎ. «ՓՈՒԹԻՆ ՊԱՏՐԱՍ Ե ԹՐԱՄՓԻ ՅԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՆԱԼՈՒ»



Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին պատրաստ է իր ամերիկացի պաշտօնակից Տանըլտ Թրամփի հետ հանդիպում ունենալու, սակայն նման դեմ առ դեմ հաղորդակցութիւններու հաւանական թուականներու վերաբերեալ որեւէ որոշակիութիւն չկայ: ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտարարած է Ռուսիոյ նախագահի բանբեր Տիլդրի Փեսքով:

«Բարձր մակարդակի որեւէ հանդիպման վերաբերեալ որեւէ որոշակիութիւն չկայ: Եթէ ռուս ամերիկեան հանդիպման մասին խօսինք՝ նախագահին կողմէ պատրաստակամութիւն կայ», նշած է ան:

«Նախագահներ Փութինն ու Թրամփը իրենց հեռաձայնային հաղորդակցութիւններուն մէջ իրօք միշտ կ'ընդգծեն ժամանակի ընթացքին, անհրաժեշտութեան պարագային, յաւելեալ հանդիպում մը ունենալու պատրաստակամութիւնը», յիշեցուցած է Փեսքով:

Յիշեցնենք, թէ Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու նախագահները նախապէս հանդիպած են 15 օգոստոս 2025-ին, Միացեալ Նահանգներու Վլասքա Նահանգի Անքըրէժ քաղաքին մէջ:

Այդ հանդիպումէն ետք, երկու պետութիւններու ղեկավարները պարբերաբար հեռաձայնային հաղորդակցութիւն կ'ունենան:

ՇԱՐԴ. «ԱՇԽԱՏԱՆՔ ԿԸ ՏԱՆԻՆՔ ԿԱՐԵԼԻ ԵՂԱԾԻՆ ԶԱՓ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՕԳՆԵԼՈՒ»



Սուրիոյ նախագահ Ահմետ Շարի Նիւ Եորքի մէջ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 81-րդ Նիստի ընթացքին խօսք մը արտասանելով յիշեցուց. «Կոլաւոր ՄԱԿ-ի որոշումներուն համաձայն սուրիական հող է, եւ ատիկա քննարկելի չէ»:

«Կրնանք կարիքը ունենալ միջազգային յանձնախումբի մը՝ քննարկելու համար Իսրայէլի ապահովական մտավախութիւնները, եւ իսկական մտավախութիւններն ու պատկերացումները զատորոշելու», ըսաւ ան:

«Ապահովական դասաւորումներ քննարկելէ առաջ, Իսրայէլէն կը պահանջենք հեռանալ դէպի այն շրջաններ, որոնք 1974-ի դասաւորումներուն հիմամբ բռնագրաւած էր», նշեց Սուրիոյ նախագահը:

Անդրադառնալով Լիբանանին՝ Շարի նշեց. «Աշխատանք կը տանինք կարելի եղածին չափ լիբանանեան կառավարութեան օգնելու եւ պետութեան հաստատութիւնները իրենց պարտականութիւնները կատարելու կարող դարձնելու»:

Ինչ կը վերաբերի տնտեսութեան, ան ըսաւ. «Աշխատանք կը տանինք իրաքեան արտադրութիւններու, մասնաւորաբար քարիւղին սուրիական հողերէն ապահով միջանցք ապահովելու»:

«Մենք չենք ուզեր ցեղային, աշխարհագրական կամ կրօնական հիմամբ բաժնեկցութեան համակարգ մը, որ Սուրիոյ մասնատման կը յանգեցնէ», շեշտեց Սուրիոյ նախագահը:

«Միացեալ Նահանգներ ներքաշուած են Իսրայէլի հետ մեր երկխօսութեան ու բանակցութիւններուն մէջ, սակայն հարցերը դիւրին չեն», ըսաւ Շարի:

ՀԶՊԱԼԼԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ «ՇԱՂՁՈՅԵԱՆ» ԿԵԴՐՈՆ



ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Ալպեր Պալապանեան 23 սեպտեմբեր 2026-ին «Շաղղոյեան» կեդրոնին մէջ ընդունեց Հրգպալայի եւ Հաւատարմութիւն դիմադրութեան պլոքի պատուիրակութիւնը՝ ներկայութեամբ ՀՀԴ Բիւրոյի անդամ, Միջին Արեւելքի պատասխանատու եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատուն:

Նիի, Կեդրոնական կոմիտէի անդամներ ճորճ Գրիգորեանի եւ Յովհաննէս Խօշեանի, ինչպէս նաեւ լիբանանեան Ազգային կուսակցութիւններու, ուժերու եւ անձնաւորութիւններու հանդիպումին մօտ ՀՀԴ-ի ներկայացուցիչ Պարոյր Տէր Ղուկասեանի: Հրգպալայի պատուիրակութիւնը կը բաղկանար երեսփոխաններ Ալի Ֆայյատէն եւ

Շար.ը՝ էջ 8

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԵՋ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻՐԱՆ «ՅԱԶՈՂ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ»

Ամերիկացի պատուիրակ Սթիւ Ուիթթըճ յայտարարեց. «Երկարատեւ բանակցութիւններ վարեցինք իրանեան պատուիրակութեան հետ՝ միջնորդներու միջոցով, որոնք երկու կողմերուն միջեւ կ'երթեւեկէին»:

Նշենք, որ ամերիկացի պատուիրակներ Ուիթթըճի եւ Ճարեա Քուշնէրի իրանցի պաշտօնատարներու հետ հանդիպումը տեղի ունեցաւ Նիւ Եորքի մէջ ՄԱԿ-ի 81-րդ Ընդհանուր ժողովի ծիրին մէջ:

«Միջնորդները յաջողութեամբ ա-



ւարտեցին քննարկումներու փուլ մը, որ կը յուսանք կ'ըլլայ շինչ ու խստումնաւիճ, եւ պիտի շարունակենք իրենց աշխատանքը», անցուց Ուիթթըճ:

Շար.ը՝ էջ 2

ԸՍՏ «ԱՔՍԻՈՍ»-Ի

ԹՐԱՄՓԻ ԳԼԽԱՒՈՐԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԿԱԶՁԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 2,45 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐԻ ԾՐԱԳԻՐ ՊԻՏԻ ՅԱՅՏԱՐԱՐԷ

Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի գլխաւորած Խաղաղութեան խորհուրդը Կազայի վերականգնման 2,45 միլիար տոլար արժողութեամբ ծրագիր մը պիտի յայտարարէ: Այս մասին հաղորդեց ամերիկեան «Աքսիոս» կայքը՝ մէքերելով փաստաթուղթ մը: «Կազայի վերականգնման ծրագիրը կը ներառէ ժամանակաւոր բնակարաններ, փլատակներու վերացում, ինվանդանցներու նորոգութիւն, տնտեսական աշխուժացում,



ինչպէս նաեւ բազմազգեան ապահովական ուժերու տեղակայում», նշեց կայքը:

Շար.ը՝ էջ 2

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԵՆԵԶՈՒԵԼԱՅԻ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

Զորքեջաթի, 23 սեպտեմբեր 2026-ին, Պիքֆայի Սուրբ Աստուածածին վանքին մէջ Արամ Ա. Վեհափառ հայրապետին այցելեց Լիբանանի եւ Սուրիոյ մէջ Վենեզուելայի դեսպան Խոսէ Կրէկորիո Պիոմոնի, իր խորհրդականներուն ընկերակցութեամբ: Հանդիպումին ներկայ էր նաեւ Վենեզուելայի հայոց հոգեւոր տեսուչ Պետրոս եպս. Մանւելեան:



Աւելի քան մէկ ժամ տեւած հանդիպումը առիթ եղաւ լայնօրէն անդրադառնալով վերջին զարգացումներու լոյսին տակ Վենեզուելայի հետ աղէքս ունեցող հարցերուն, ինչպէս նաեւ հայ

Շար.ը՝ էջ 8

ԼԱՐՈՎ. «ՀԱՍՈՉՈՒԾ ԵՄ, ՈՐ ՌՈՒՄ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ ԿԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵ ՄԵՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎՈՐԱՆԵՐՈՒ ՇԱՅԵՐՈՒՆ»

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով շնորհաւորած է Հայաստանի արտաքին գործոց ու միջազգային առեւտրի նախարար Արարատ Միրզոյեանը՝ Հայաստանի Հանրապետութեան վերանկախութեան տօնին առիթով:

«Համոզուած եմ, որ ռուս-հայկական համապարփակ համագործակցութեան պահպանումը, ներառեալ Ռուսիոյ եւ Հայաստանի արտաքին քաղաքականութեան նախարարութիւններուն միջեւ աշխուժ երկխօսութիւնը, կը համապատասխանէ մեր երկիրներու ժողովուրդներու փոխադարձ շահերուն: Կը մաղթեմ ձեզի եւ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեամբ ամբողջ անձնակազմին քաջառողջութիւն, բարեկեցութիւն եւ յաջողութիւն», կը նշուի Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան կայքին վրայ հրապարակուած հեռագիրին մէջ:

ՓԱՇԻՆԵԱՆՆ ՈՒ ԷՐՏՈՂԱՆԸ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԿԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան և Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան քննարկած են Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը եւ ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու իրականացումը:

Նիւ Եորքի մէջ ՄԱԿ-ի 81-րդ Ընդհանուր ժողովի շրջանակին մէջ տեղի ունեցած հանդիպումին ընդգծուած է կարգաւորման գործընթացը յառաջ մղելու կարեւորութիւնը եւ յարաբերութիւններուն տոր ազդակ հաղորդելու պատրաստակամութիւնը:

Շար.ը՝ էջ 8

ԷՐՏՈՂԱՆ. «ԹՈՒՐԵԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿԿՈՐՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ՄԵՋ ՅԱՌԱՋԸՆԹԱՅ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԵՆ»

Թուրքիան եւ Հայաստանը յարաբերութիւններու կարգաւորման հոլովոյթին մէջ յառաջընթաց արձանագրած են: Այս մասին ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի ամպիոնէն յայտարարած է Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան:

«Մեր երկրին եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման հոլովոյթը կ'ընթանայ նախատեսուածին համաձայն», ըսած է ան:

Էրտողան նաեւ խօսած է Հայաստան-Ազրայէճան յարաբերութիւններուն մասին՝ նշելով, որ Անգարան սկիզբէն կողմերը խրախուսած է խաղաղութիւն հաստատելու:

Շար.ը՝ էջ 8

ՄԱՍԵՆՆԻԷՐՈՎ. «ԵՐՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԻՆ ՄԵՋ ՀԵՏԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԴԻՏՈՒՄՆԱՒՈՐ ՑՈՒՑԱՐԱՐԱԿԱՆ ԲՆՈՅԹ ԿԸ ԿՐԷ»

Եւրոպական Միութեան Հայաստանի հետ յարաբերութիւններու զարգացման հարցին մէջ հետաքրքրութիւնը դիտումնաւոր ցուցադրական բնոյթ կը կրէ. ատոր նպատակն է՝ վնաս հասցնել Ռուսիոյ եւ լուծել սեփական աշխարհաքաղաքական խնդիրները: «ՌԻԱ Նովոսթի»-ի հետ հարցազրոյցի ընթացքին այս մասին յայտարարած է Ռուսիոյ արտաքին

Շար.ը՝ էջ 8

ՄԱՂԱԾԷԼԵԱՆ. «ԱԶՊԵՅՃԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԽԵՂԱԹԻՐԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»



22 սեպտեմբերին ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթէլեան հանդէս եկաւ մամլոյ ասուլիսով, որուն ընթացքին ամփոփեց խորհրդարանական շաբաթը եւ պատասխանեց լրագրողներու հարցումներուն:

Արձագանգելով Պաքոնէն հնչող յայտարարութիւններուն, թէ՛ «հայկական կողմը Դադիվանքէն մշակութային արժէքներ գողցած է», Սաղաթէլեան դիտել տուաւ, որ Նիկոլ Փաշինեան իր վարած արտաքին քաղաքականութեամբ Հայաստանը գոհի կարգալիճակէն վերածած է յարձակողի-բռնացողի:

Շար.ը՝ էջ 8

ԸՍՏ «ԱԽՊԱՐ»-Ի

ՏԱՐ ՖԱԹՈՒԱՆ ՄԵՐԺԱԾ Է ԹՐԵԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ՄԻՖԹԻ ՏՐԻԱՆԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ ՏԱԼ



«Ախպար» օրաթերթը կը գրէ. «Հակառակ թըրքական պետութեան լիբանանեան պետութեան ղեկավարներուն հետ բաց դռներու քաղաքականութիւն վարելուն, թուրք պաշտօնատարները մինչեւ հիմա չյաջողեցան Տար Ֆաթուայի հետ իրողական յարաբերութիւններ մշակել՝ հանրապետութեան միւլֆթի շէյխ Ապտէլլաթիֆ Տրիանի այդ հարցին նկատմամբ խանդավառ ըլլալուն պատճառով: Դիտորդներ այդ կեցուածքը կը վերագրեն, Սեուտական Արաբիան չգրգռելու անոր նախանձախնդրութեան հաւանականութեան»:

«Ախպար»-ի տեղեկութեան համաձայն, Տար Ֆաթուան վերջերս մերժած է ժամադրութիւն ճըշդել մարդասիրական օժանդակութեամբ զբաղող թրքական դիւանագիտական պատուիրակութեան մը, որ կ'ուզէր շէյխ Տրիանի հետ հանդիպում ունենալ:

Պատուիրակութիւնը նախքան այդ այցելած էր շարք մը քաղաքական եւ հոգեւոր հեղինակութիւններու, ինչպէս՝ մարոնիներու Ռայի պատրիարքին, եւ պատուիրակութեան այցելութեան նպատակը քաղաքականեւ աւելի հիմնականին մէջ օժանդակութեան թղթածրարներու առնչուած է:

«Տար Ֆաթուայի դռները Անգարայի առջեւ փակ պահելու Տրիանի որոշումը նոր չէ: Հանրապետութեան միւլֆթին յաճախ կ'այցելէ Թուրքիա, որովհետեւ այդտեղ տուն ունի, սակայն չէ պատահած, որ թրքական քաղաքական որեւէ հեղինակութեան այցելէ, ինչպէս նաեւ թրքական իշխանութիւնները անոր պաշտօնական ընդունելութիւն չեն ապրտաստած», կը գրէ օրաթերթը:

ԹՐԱՄԺԻ ԳԼԵԱՒՈՐԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Մինչ այդ, Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթաֆահու եւ պաշտպանութեան նախարար Իսրայէլ Զաք միացեալ հաղորդագրութիւն մը հրապարակելով յայտարարեցին, թէ իսրայէլեան բանակը օդային յարձակումով մը Կազայի հարաւը գտնուող Խան Եունեսի մէջ ահաբեկած է Համասի ելեմտական հարցերու բաժանմունքի պետ Մահմուտ Ապու Ալունանը:

ԴԵՍՊԱՆ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՆԱԽԱՐԱՐ ԶԵՅՆԻ

Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Սարմէն Պաղտասարեան երկուշաբթի, 21 սեպտեմբերին այցելեց Լիբանանի կենսոլորտի նախարարութիւն, ուր հանդիպում ունեցաւ նախարար ղոկտ. Թամարա Չէյնի հետ:

Հանդիպումի ընթացքին ընկերակցեցան նախապատրաստական աշխատանքները «Առաջնորդներ յանուն բնութեան» վեհաժողովին, որ նախատեսւած է 15 եւ 16 հոկտեմբերին Երեւանի մէջ, Կենսաբազմազանութեան մասին ուխտի կողմերու 17-րդ ընդհանուր ժողովի՝ ԲՈՓ17-ի ծիրին մէջ:

Նախարար Չէյն վեհաժողովին ընթացքին պիտի ներկայացնէ հանրապետութեան նախագահ ժողգէ Գունը՝



մասնակցելով բարձր մակարդակի ընկերակցումներու, որոնք ուղղուած են կենսաբազմազանութեան պահպանման ամրապնդման, ինչպէս նաեւ բնութեան պահպանութեան համար անհրաժեշտ քաղաքական յանձնառութեան ու ֆինանսաւորման ապահովման՝ զայն կապելով խաղաղութեան ու կայուն զարգացման ուղիներուն:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

«ՆԻՏԱ ՈՒԹԱՆ»

օրաթերթի տեղեկութեան համաձայն, «Միացեալ Նահանգներն ու Իսրայէլը կը մերժեն ՖԻՆԻԼ-ի առաքելութիւնը ներկայ տեսքով նոյնիսկ կարճ ժամանակով երկարածգելը, եթէ մտադրութիւնը նոյն ուժերն ու նոյն լիազօրութիւնները պահելն է: Կը պահանջուի փոփոխութեան ենթարկել առաքելութեան բնութիւնը, անոր գործունեութեան մեթոտները եւ լիազօրութեան սահմանները»:

«ՆՏՏԱ ՈՒԹԱՆ» օրաթերթի տեղեկութեան համաձայն, «փորձական շրջաններու ընկերակցումը գործնականին մէջ վերջ գտաւ, եւ փորձին մահը գլոխուցեալ, երբ ան բախեցաւ այն իրողութիւններուն, զորս պէտք էր փորձարկել»:

«ԼԱՐԱՏԵՐԱԿԱ աղբիւր մը «Ասաս Միտիա»-ին. «Լիբանանեան կողմը հիմա շահ չի տեսնէր յաջորդ հոկտեմբերին՝ Զետեթի ընտրութիւններէն շաբաթներ կամ օրեր ետք, բանակցութիւններու փուլ կատարելու մէջ, եւ կը նախընտրէ, որ անկիւ տեղի ունենայ այս ժամկետի աւարտէն ետք, նոյնիսկ եթէ առիկա ժամանակ պահանջէ, որովհետեւ խորայնացիները պատրաստ չեն որեւէ բան տալուն»:

«ԱՍԱՍ ՄԻՏԻԱ» կը հաղորդէ, որ հանրապետութեան նախագահ ժողգէ Գուն կը զօրակցի Հրգպալայի հետ երկխոսութեան եւ կը սպասէ կուսակցութեան կողմէ իր գէնը յանձնելու վերաբերեալ իրապարակային յայտարարութեան մը կամ դիմորդշման մը, սակայն կը մերժէ գէնքին վերաբերեալ կառավարութեան որոշումներէն ետդարձ կատարելու կամ բանակցութիւնները դադրեցնելու Հրգպալայի նախապայմանները, որոնք, նախա-



գահին խօսքով, տեղի պիտի չունենան:

«ԼԵԱՆԱՐԱՐԱԿԱՆ աղբիւրներ «ԼԵպանոն Ֆայլզ»-ին յայտնած են, որ իրենց վերլուծութեան համաձայն, աշխատաւորական միութիւններու ձեռնարկած մագլցումն ու վատթարացող տնտեսական ու ապրուստի պայմաններու դէմ բողոքի ցոյցերու սպառնալիքները կը համընկնին նախագահութեան եւ շիի երկեակին միջեւ քաղաքական լուրջ վեճին: Աղբիւրները նշած են, թէ աշխատաւորական միութիւններու շարժումները ղեկավարող քանի մը հիմնական դէմքեր կապուած է շիի երկեակի քաղաքական ուժերուն, մասնաւորաբար խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրիիին:

«ԼԵՊԱՆՈՆ ՖԱՅԼԶ»-ի տեղեկութեան համաձայն, Լիբանանեան ուժեր կուսակցութեան ընդլայնման մէջ նախարար Ճօ Ստիի «հրաժարական» բառը տակաւին չէ արտաբերուած, եւ կուսակցութիւնը ունի բազմաթիւ տարբերակներ, որոնց կրնայ ձեռնարկել, եթէ կառավարութիւնը չարձագանգէ նախարար Ստիի ուժանիւթ թղթածրարին վերաբերեալ պահանջներուն, մասնաւորաբար՝ պետութեան Լիբանանի Ելեկտրականութեան ընկերութեան ունեցած պարտքերուն վերաբերեալ:

ՌԱԱՏ. «ՀԸԶՊԱԼԼԱՆ Կ'ՈՒԶԷ, ՈՐ ՆԱԽԱԳԱՅԸ ԿԱՌԱՎԱՐԷ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԲՆԱԳԻՐԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆԵ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»



Հաւատարմութիւն դիմադրութեան երեսփոխական պլոքի նախագահ Մոհամետ Ռաատ «Մուտուն»-ի հետ հարցազրոյցի ընթացքին պետութիւնը մեղադրեց «գերիշխանութիւնը մսխելու եւ բռնակարաւումը օրինականացնելու» յանցանքով՝ աւելցնելով, որ Իսրայէլի հետ ուղղակի բանակցութեան դիմելու անոր «սայթաքումը» «ամօթ է եւ թըշնամիին կու տայ հնազանդութիւն ու զիջումներ, որոնց մասին ան երբեք չէր կրնար երազել»:

Անդրադառնալով հանրապետութեան նախագահ ժողգէ Գունի հետ Հրգպալայի յարաբերութեան՝ Ռաատ ըսաւ, որ կուսակցութիւնը նախագահէ կ'ուզէ, որ «կառավարէ սահմանադրութեան բնագիրին եւ Ազգային համաձայնութեան փաստաթուղթին համաձայն, եւ իր դիմորդներուն մէջ ազգային միասնականութիւնն ու Լիբանանի տեղական ու միջազգային յարաբերութիւնները պահպանէ»:

Ինչ կը վերաբերի Ամալ շարժումին հետ յարաբերութեան, ան ըսաւ. «Մեր միջեւ պառակտում յառաջացնելու բոլոր փորձերը պիտի ձախողին», եւ մերժեց Հրգպալայի հետ Միացեալ Նահանգներու երկխոսութեան թղթածրարին մասին խօսիլ՝ նշելով. «Ներկայիս այդ առնչութեամբ ոչինչ ունիմ ըսելիք»:

Անդրադառնալով պաշտպանութեան ռազմավարութեան՝ երեսփոխանը նշեց. «Բոլոր պայմաններուն մէջ ազգային անվտանգութեան ու պաշտպանութեան համապարփակ ռազմավարութեան շուրջ ազգային փոխըմբռնումը երկրին համար կարեւոր հարց է, եւ անոր առաջին պայմաններէն մէկը գերիշխանութիւն վայելող ու որոշ չափով պատասխանատուութեան գիտակից իշխանութեան գոյութիւնն է»:

Պատասխանելով այն հարցումին, թէ կուսակցութիւնը յանձնառու պիտի դառնայ, եթէ լիբանանեան պետութիւնը ձեռք բերէ իսրայէլեան հեռացումը, թշնամական արարքներու դադրեցումն ու վիճելի տարբեր կետերու լուծումը երաշխաւորող համաձայնութիւն, Ռաատ ըսաւ. «Եթէ այդ մէկը տեղի ունենայ ազգային փոխըմբռնումը երկրին համար կարեւոր հարց է, եւ անոր առաջին պայմաններէն մէկը գերիշխանութիւն վայելող ու որոշ չափով պատասխանատուութեան գիտակից իշխանութեան գոյութիւնն է»:

«Եթէ բանակցութիւնները ձախողին, եւ իշխանութիւնները ետդարձ կատարեն Դիմադրութեան վերաբերեալ իրենց որոշումներէն, մենք ունինք քանի մը տարբերակներ, զորս կրնանք ընկարկել եւ անոնց շուրջ համաձայնութիւն գոյացնել», ըսաւ Հաւատարմութիւն դիմադրութեան երեսփոխական պլոքի նախագահը:

ՆԻՒ ԵՈՐԹԻ ՄԵՋ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ...

Շարունակուած Ա. Էջէն

Միացեալ Նահանգներու նախագահ Տաւրիտ Թրամփ ամերիկացի պատուիրակներու իրանեան պատուիրակութեան հետ հանդիպումէն ետք յայտարարեց, թէ կը կարծէ, թէ Իրանի հետ լուծում ձեռք պիտի բերուի:

«Մօտիկ ապագային իրանցիներուն հետ որոշուած մէկ այլ ժողով մը ունինք», նշեց Թրամփ:

Նշենք, որ ամերիկացի պաշտօնատար մը «Սի.Էն.Էն.»-ին յայտնած էր, որ Թրամփ իր խորհրդականներուն ըսած է, թէ կ'ուզէ Նիւ

Եորք գտնուող իրանցի պաշտօնատարներուն հետ հանդիպում դասաւորել:

Իրանի պետական պատկերասփիւռի կայանը հաղորդեց, թէ Իրանի արտաքին գործոց նախարար Ապպաս Արաղչիի եւ ամերիկացի պատուիրակ Սթիւ Ուիթթֆի միջեւ Նիւ Եորքի մէջ ժողով մը գումարուած է՝ ամերիկեան կողմի զայն գումարելու պնդումէն ետք:

Ըստ պատկերասփիւռի կայանին, իրանեան կողմը ամերիկեան կողմին փոխանցած է Հորմուզի նեղուցը վերաբանալու Թեհրանի

պայմանները, նախ եւ առաջ՝ ծովային շրջափակման անմիջապէս վերացում, իրանեան սառնեցումը գումարներու ապաստանեցում եւ դիմադրութեան բոլոր ճակատներուն վրայ պատերազմին վերջ տալ:

Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Իսմայիլ Պաղայի իրանեան ԻՐՆԱ լրատու գործակալութեան յայտնած է, որ Իրան Նիւ Եորքի մէջ Զաթարի միջոցով Միացեալ Նահանգներուն փոխանցած է պատերազմը դադրեցնելու վերաբերեալ իր պայմանները:

Պաղայի ըսած է, թէ այդ պայմանները կը ներառեն բոլոր ճակատներուն վրայ ամերիկեան իսրայէլեան պատերազմի եւ Միացեալ Նահանգներու «յարձակողական արարքներու» դադրեցումը:

Ան յայտնած է, որ Իրան նաեւ պահանջած է, որ Միացեալ Նահանգները դադրեցնեն իրանեան նաւահանգիստներու դէմ հաստատուած շրջափակումը, տնտեսական պատերազմը, ինչպէս նաեւ ապաստանեցնել իրանեան սառնեցումը դրամատնային հաշիւները:

Իրանի արտաքին գործոց նախարար Ապպաս Արաղչի Նիւ Եորքի մէջ յայտարարութիւն մը

կատարելով չէշտեց. «Շրջանին մէջ ծովային անվտանգութեան վերականգնումը կը պահանջէ, որ Ամերիկան դադրի անվտանգութիւնը քայքայելու եւ տնտեսական ահաբեկչութիւնը դադրեցնել»:

Միւս կողմէ, Ֆրանսայի նախագահ Էմաուէլ Մաքրոն ամերիկեան «Էյ.Պի.Սի.Լիուզ» պատկերասփիւռի կայանին յայտնեց. «Ֆրանսան պատրաստ է Հորմուզի նեղուցին մէջ նաւարկման պաշտպանութիւնը երաշխաւորելու պաշտպանական բնոյթ ունեցող միջազգային գործողութեան մը մասնակցելու»:

Առցանց Լսարան

Հինգշաբթի, 15 Հոկտեմբեր 2026-ին, Պէյրութի ժամանակացոյցով ժամը 19:00-ին:

Մասնակցութեան համար գրել minas777@gmail.com եւ նամակի կամ +374 70 80 70 50 համարին (WhatsApp)

«Գանձեր Մխիթարեան երաժշտական ակադեմիային»

Փրոֆ. Հայկ Իւրիւնեան

Փրակի Կարդեան համալսարանի երաժշտական համոյթներու երաժշտապետ

ՀՅԴ «Ս. ԹԵՀԼԻՐԵԱՆ» ԱՎՈՒՄԲԻ ԿԱՐԴՈՒԹԻՒՆ

ԾԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

ԳՐԱԴՈՒՄԵ ՕՐ

13 ՓԵՏՐՈՒՄ 2027

@SOGHOMONTEHLIRIANGOMIDE
SOGHOMON TEHLIRIAN GOMIDE

ՄՈՒՍԱ ԼԵՌԸ՝ ԱՆՍԱՄԱՆ ԿԱՄՔԻ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Հայ ժողովուրդի նորագոյն պատմության էջերուն մէջ Մուսա Լերան հերոսամարտը կը մնայ իբրեւ ազգային կամքի, հաւատքի, միասնականութեան եւ ինքնակազմակերպումի վկայութիւն մը:

Այդպէս, աւանդութեան վերածուած Մուսա Լերան հերոսամարտի 111-ամեակը եւ Այնճարի հիմնադրութեան 87-ամեակը անգամ մը եւս առիթ հանդիսացան համախմբելու Այնճարի հայութիւնը եւ աշխարհի տարածքին սփռուած եւ այս առիթով Այնճար ժամանած մուսալեռցիներու սերունդները՝ ոգեկոչելու իրենց պատմութեան հերոսական էջերը եւ վերաբժեղելու այն ազգային արժէքները, որոնց շնորհիւ մուսալեռցիներ կրցաւ դիմադրել, վերապրիլ ու նոր հայրենիք մը կերտել:

Մուսա Լերան հերոսամարտի 111-ամեակին եւ Այնճարի հիմնադրութեան 87-ամեակին նուիրուած ոգեկոչման ձեռնարկներու շարքին, ամէնէն հանդիսաւոր փուլը՝ ժողովուրդային տօնախմբութիւնը, տեղի ունեցաւ շաբաթ, 19 սեպտեմբեր 2026-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Այնճարի մէջ: Տօնական ու հայրենաշունչ մթնոլորտի մը մէջ, ՀԱՄԻ-ի Այնճարի մասնաճիւղի շէփորահաւորներն առաջնորդութեամբ, բազմահարկի հայրենակիցներ ուղղուեցան դէպի Մուսա Լերան յուշարձան - համալիր, ուր տեղի ունեցաւ պաշտօնական հանդիսութիւնը:

Ձեռնարկը սկիզբ առաւ Լիբանանի, Հայաստանի եւ Արցախի ընկերգներով: Բացման խօսքը արտասանեց Մարինէ Գարայեան, որ խախ ներկաները իրաւիբեց մէկ վայրկեան յոռնկայս յարգելու Մուսա Լերան հերոսամարտի 18 նահատակներուն յիշատակը:

Ան ըսաւ, թէ 111 տարիներ առաջ մուսալեռցիները ընտրեցին պայքարը, արժանապատուութիւնն ու ապրելու սրբազան իրաւունքը՝ 40 օր շարունակ դիմադրելով մահուան: Այդ հերոսամարտի ոգին շարունակուեցաւ Այնճարի մէջ, ուր մեր պապերը ճանհաճաւոր հողը վերածեցին ամուր ու կենսունակ հայկական աւանի:

Գարայեանի դիտել տուաւ, որ այսօր Այնճարը կը մնայ հայոց լեզուի, աւանդութիւններու, ազգային շունչի եւ համայնքային կեանքի պահպանման կենդանի վկայութիւնը՝ շեշտելով, որ Մուսա Լերան ոգին անցեալին չի պատկանիր, այլ կը շարունակուի:

Նակե ապրիլ Այնճարի հողին, քարերուն եւ նոր սերունդներուն սրտին ու մտքին մէջ:

Ան շեշտեց, որ 111-ամեակի այս փուլին մեր պարտաւորութիւնն է անեղծ պահել Այնճարի հայկական դիմագիծը եւ Մուսա Լերան պատգամը փոխանցել գալիք սերունդներուն՝ հաստատելով, որ Մուսա Լերան կանչը կը շարունակուի՝ դէպի աւելի հզօր Այնճար, դէպի հզօր հայրենիք եւ ամբողջական ազգային ապագայ:

Հանդիսավարութիւնը կատարեցին Մարինէ Գարայեան եւ Սեւակ Հապէշեան:

Մուսա Լերան ոգին ու ազատատենչութիւնը, ազատ ապրելու եւ պատուով նահատակուելու անսասան կամքը, ինչպէս նաեւ հայրենի հողին կառչած մնալու եւ ազգային իրաւունքներուն տէր կանգնելու միտքերը արտայայտող լուցումներով ընթացք առաւ գեղարուեստական յայտագիրը: Առաջին հերթին բեմ բարձրացաւ Համազգային «Պարոյր Սեւակ» մասնաճիւղի «Կաքաւիկ» երգախումբը, որ հանդէս եկաւ ազգային հայրենասիրական փունջ մը երգերով:

Ապա Ազգային Յառաջ - Գալուստ Կիւլալենեան քուեծի պարախումբը գեղեցիկ կատարումով մը ներկայացուց ժողովրդային պար մը, իսկ Այնճարի Հայ աւետարանական վարժարանի աշակերտները նուագով ներկայացուցին «Գետաշէն» երգը:

Ապա հաղորդավարը յայտնեց, թէ նահատակներուն յիշատակը կը յանձնարարուի այն առնէ, երբ անոնց գործը կը շարունակուի նոր սերունդներու վճռական կամքով ու հաւատքով: Ապա հաստատեց, որ Մուսա Լերան հերոսամարտի տասնութ նահատակներու շառաւիղը կը հանդիսանայ Պետիկ Ինճեանը, որ մեր նորագոյն պատմութեան մէջ հանդիսացաւ զինեալ պայքարի առաջին նահատակը՝ իր անունը անջնջելիօրէն փորագրելով հայրենիքի, Հայ դատի պաշտպանութեան եւ ազգային ազատագրական պայքարի պատմութեան մէջ, եւ որուն նահատակութեան յիսնամեակն է այս տարի:

Անդրադարձ մը կատարուեցաւ նաեւ, որ այս տարին նա-



հատակութեան քառասունամեակն է Չաւեն Թաշճեանին, որ կը մարմնաւորէ դաշնակցական մարդու պարզութեան, խորութեան, նուիրումի եւ անսակարկ հաւատքի կերպարը:

Յարգանքի եւ երախտագիտութեան այս խոր զգացումներով ժողովուրդը ունկնդրեց Պետիկ Ինճեանի եւ Չաւեն Թաշճեանի յիշատակին նուիրուած երգերը՝ լիբանանահայ սիրած երգիչ Ղազար Զեօշկերեանի մեկնաբանութեամբ եւ Սեդո Պաղտասարեանի նուագակցութեամբ:

Օրուան պատգամը փոխանցեց ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Ալպեր Պալապանեան, որ դիտել տուաւ, թէ ոգեկոչելով հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան ամէնէն նշանակալից էջերն մէկը՝ Մուսա Լերան հերոսամարտը, կը վերահաստատենք, որ ասիկա միայն պատմական դէպք մը չէ, այլ հայ ժողովուրդին կամքին, արժանապատուութեան, միասնականութեան եւ գոյատեւելու վճռականութեան խորհրդանշանը: Ան աւելցուց, թէ մուսալեռցիները միայն զենքի ուժով չպայքարեցան, այլ իրենց հաւաքական կամքով ընտրեցին արժանապատուութեամբ ապրելու, իրենց ինքնութիւնը պահպանելու եւ հայրենի հողին կառչած մնալու ուղին: «Այդ ոգին շարունակութիւնը դարձաւ Այնճարը»

Շար.ը՝ էջ 6

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԸ ԿԸ ՊԱՐՏԱԽՈՐԵՑՆԷ ՊԱՀՊԱՆԵԼ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹԻՒՆՆԸ ՈՒ ԱՅՆՃԱՐԻ ՀԱՅԵՑԻ ԴԻՄԱԳԻԾԸ, ԶՕՐԱՅՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՊԱՀՊԱՆԵԼ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ*

Այսօր հաւաքուած ենք յիշելու հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան ամէնէն նշանակալից էջերն մէկը՝ Մուսա Լերան հերոսամարտը:

Մուսա Լերան հերոսամարտը պատմական դէպք մը չէ միայն: Ան հայ ժողովուրդի կամքին, արժանապատուութեան, միասնականութեան եւ գոյատեւելու վճռականութեան վկայութիւնն է:

1915-ին, երբ Օսմանեան կայսրութեան տարածքին հայ ժողովուրդը ենթարկուած էր Յեղասպանութեան եւ բռնազաղթի, Մուսա Լերան հայութիւնը մերժեց ենթարկուիլ իր ճակատագիրը որոշող բռնութեան: Քառասուն օր իրենց սահմանափակ միջոցներով մուսալեռցիք կազմակերպեցին ինքնապաշտպանութիւն եւ դիմադրեցին թշնամիին:

Այդ պայքարը միայն զենքի պայքար չէր: Ան հաւաքական կամքի արտայայտութիւն էր: Մուսալեռցիները գիտէին, որ իրենց դիմադրութիւնը կեանքի եւ մահուան միջեւ ընտրութիւն մըն էր, բայց անոնք ընտրեցին արժանապատուութեամբ ապրելու եւ իրենց ինքնութիւնը պահպանելու ուղին:

Այդ պատճառով Մուսա Լեռը դարձաւ խորհրդանշան:

Խորհրդանշան մը, որ մեզի կը յիշեցնէ, թէ ժողովուրդ մը կըրնայ գոյատեւել, երբ ունի միասնականութիւն, կազմակերպւածութիւն եւ սեփական ուժին նկատմամբ հաւատք:

Սակայն Մուսա Լերան պատմութիւնը այստեղ չ'աւարտիր: Հերոսամարտէն ետք մուսալեռցիներու մեծ մասը տեղափոխուեցաւ Միջերկրական ծովու արեւելեան ափերը եւ ի վերջոյ հաստատուեցաւ Լիբանանի Այնճար շրջանին մէջ:

Այնճարը դարձաւ Մուսա Լերան նոր տունը:

Այստեղ՝ Լիբանանի հողին վրայ, մուսալեռցիները ոչ միայն վերակազմակերպեցին իրենց կեանքը, այլ նաեւ պահպանեցին իրենց լեզուն, բարբառը, մշակոյթը, եկեղեցին, դպրոցը եւ ազգային արժէքները: Եւ այս բոլորը՝ բիրտ զոհողութիւններով, քրտինքով եւ արեամբ:

Այս իմաստով, Այնճարը շարունակութիւնն է Մուսա Լերան հերոսամարտին՝ այլ պայմաններու մէջ:

Մուսա Լեռը գէնքով պաշտպանեց իր ժողովուրդի կեանքը, իսկ Այնճարը տասնամեակներ շարունակ պաշտպանեց անոր ինքնութիւնը:

Մուսա Լերան շարունակութիւնը հանդիսացող Այնճարը ուրեմն, նաեւ հերոսամարտի դաւանած արժէքները պահող միջավայրն է, հայկական աւանն է, մեր բերդն է: Ուստի հանդուրժելի չէ այս հրաշալի բերդին նկատմամբ որեւէ ոտնձգութիւն: Հողին կառչած մնալը Մուսա Լերան աւանը է ու կտակ, օտարին հող վաճառելը համագործ բնօրրանը օտարին ծայրելուն: Նիւթականի գերադասումը՝ հաւաքականին, ազգայինին, դիմագիծին եւ աւանդութեան, ուրացում է եւ դաւաճանութիւն՝ Մուսա Լերան հերոսներուն եւ անոնց ջանքերով այնճարցի նահատակներուն, որոնք է այս գիւղը ծաղկեցուցած եւ փոքր Հայաստանի վերածած մեր նախահայրերու անսահման զոհողութեանը:

Այս հողը մեր բնօրրան հերոսներու արեամբ կերտուած Մուսա Լերան շարունակութիւնն է եւ այս հողէն հրաժարիլը, բնօրրանէն, ինքնութենէն, պատկանելիութենէն հրաժարիլ է:

Հողային պատկանելիութեան մասին երբ կը խօսինք, չենք կրնար չխօսիլ նաեւ Հայաստանի մասին:

Հայաստանի Հանրապետութիւնը մեր ազգային տունն է: Եթէ Մուսա Լեռը մեզի կը փոխանցէ գոյատեւելու կամքը, Հայաստանը այդ գոյատեւումը պետական կեանքի վերածելու պատասխանատուութիւնը ունի:

Այսօրուան Հայաստանը ունի իր արտահայտւելները՝ անվտանգութիւն, սահմաններ, ինքնիշխանութիւն, ժողովրդագրութիւն, արտագաղթ եւ ազգային միասնականութիւն:

Ազգային միասնականութեան վերականգնման համար դարձեալ լսելի է այսօր Մուսա Լերան արդիական ինչոյ պատ-



գամը: Մուսալեռցիները փոքրաթիւ էին, սակայն անոնք գիտէին, որ իրենց ուժը միայն իրենց թիւին մէջ չէր: Անոնք ուժը միասնականութեան, կազմակերպւածութեան եւ նպատակին հաւատալու մէջ էր:

Այսօր մեզի համար եւս հարցը միայն այն չէ, թէ որքան մեծ է մեր թիւը: Հարցն այն է, թէ որքանով ենք մենք կազմակերպւած, միասնական եւ պարտաստ՝ պաշտպանելու մեր հայրենիքն ու ազգային արժէքները:

Մուսա Լերան հերոսամարտի կազմակերպման մոլիչ եւ համախմբող ուժը Դաշնակցութիւնն էր, ճիշդ այնպէս, ինչպէս մալիսեան հերոսամարտերը: Եւ Սարգսապատի նման Մուսա Լեռը եւս համախմբեց համայն հայութեան բոլոր ուժերը: Բոլորին նպատակը մէկ էր. բոլորին նուիրուածութիւնը՝ իրենց բնօրրանը պահպանելու եւ փրկելու, միեւնոյնն էր:

Մուսա Լերան հերոսներու կտակը այսօր կը թելադրէ՝

- Իեռու մնալ պառակտիչ քաղաքականութենէ
- խտրութիւն չդնել հայ ժողովուրդի տարբեր հատուածներուն միջեւ
- կարեւորել սփիւռքի կարողականութիւնը եւ արժեւորել հայրենիքին նկատմամբ անոր հսկայական օժանդակութիւնն ու պետութեան հզօրացման համար տարուած աշխատանքները:

Այդ հերոսները անդամներ էին հայ ազատագրական շարժման նուիրուած կուսակցութիւններու եւ անոնց առաջին դիրքերը գրաւած Հայ յեղափոխական դաշնակցութեան: Դաշնակցութիւնը, զոր կարելի չէ արմատախիլ ընել՝ ոչ միայն հերոսական Մուսա Լեռնէ, այլ նաեւ ընդհանրապէս հայ ժողովուրդէն:

Դաշնակցութիւնը ոչ միայն արմատախիլ չէ եղած ու պիտի չըլլայ, այլ նաեւ պիտի շարունակէ հիասթափեցնել, ինչպէս անցեալի, նաեւ այսօրուան սին յայտարարութիւններով հանդէս եկող անհատները:

Մուսա Լերան հերոսամարտը ղեկավարած ուժերը ժողովուրդը փրկեցին աղէտէն, ցեղասպանութեան ենթարկուելու վտանգէն: Անրացուցին եւ ոչ թէ ախտահարեցին հայ քաղաքական միտքը, շեշտեցին ինքնապաշտպանութեան հրամայականը, երբ հայ ցեղը քննաշնչելու եւ հայրենիքները ամայացնելու նպատակ կը հետապնդէ թշնամին:

Այո՛, Մուսա Լեռը միասնականութիւնն է եւ ոչ թէ պառակտում:

Մուսա Լեռը նաեւ Արարատին հանդէպ հաւատք է, եւ ոչ թէ հայկական խորհրդանշաններու անտեսում:

Մուսա Լեռը պայքար է մեր իրաւունքներուն համար, եւ ոչ թէ անոնցմէ հրաժարում:

Մուսա Լեռը մեր Անկախութեան իռնակագիրին մէջ նշուած համայն հայութեան իրձերու կատարումն է, եւ ոչ թէ Անկախութեան իռնակագիրի մերժում:

Մուսա Լեռը հայկական ուժին համախմբումն է, եւ ոչ թէ հայրենիք-սփիւռք տարանջատում, կամ՝ «մեր գործերուն մի

ԱԼՊԵՐ ՊԱՍՊԱՆԵԱՆ

Շար.ը՝ էջ 6

ԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆԸ ԵՐԱՇԽԻՔ Ե ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ

Մեր օրերուն ամեն բան հեղինակագրկելու, վարկաբեկելու, արժեք-ներու եւ կամոյցներու հանդէպ ժխտական վերաբերում ցուցաբերելու լուրջ մթնոլորտ գոյութիւն ունի:

Ամեն մարդ ամեն բանի մասին ըսելիք ունի: Ընկերային ցանցերը եւ ընդհանրապէս «ազատութեան» խորագիրին տակ գրառումները, կեցուածքները եւ մանաւանդ պատասխանատու մարդոց կողմէ արտա-յայտութիւնները խորքին մէջ ոչ մէկ շահեկան կամ կառուցողական ըն-թացք կու տան:

Ընդհակառակն, ամեն բանի մասին խօսիլը, ամեն ինչի մասին կար-ծիք յայտնելը, ամեն նիւթի մէջ անպայման կեցուածք ունենալը ո՛չ հարցը ճիշդ ընթացքի մէջ կը դնէ, ո՛չ ալ իր մտահոգութիւնները ար-ծարծել փորձող անձը կ'արդարացնէ:

Պէտք է՝ աւելի հեռու մտածել, ըլլալ աւելի շրջահայեաց, աւելի հան-դուրժողական, աւելի հաւաքող, լաւապէս խորհելու եւ գործելու սկզբ-բունքներով առաջնորդուող:

Հակազդեցութիւնը գլխաւոր թշնամիդ է, պէտք է այս մէկը լաւ գիտ-նալ: Այս իմաստով պէտք է կայունութիւնը պահել եւ պահպանել, որ-պէսզի աւելի կառուցողական եւ հեռանկարային աշխատանք տար-լի: Կրնայ ըլլալ, որ խորքանչիւրը իր աշխատելու ոճը եւ ձեւը ունի: Կըր-նայ ըլլալ, որ այդ ձեւը անոր կամ ասոր շատ հաճելի չթուի: Բայց եր-կու հիմնական բան պէտք է գիտնալ՝ այլընտրանքը եւ հեղինակութիւ-նը:

Պէտք է լաւ մտածել, թէ այլընտրանքը ի՞նչ կրնայ ըլլալը, իսկ կամոյ-ցի մը հեղինակագրկումը ի՞նչ շահ կրնայ բերել: Ծիշդ այս երկու հիմնա-կան պատճառներով պէտք է կայունութիւնը ապահովենք եւ պահպա-նենք, որպէսզի ո՛չ անձերը եւ ո՛չ ալ կամոյցները հեղինակագրկենք:

Դժբախտաբար ժխտական ալիքը շատ աւելի արագ կը բարձրա-նայ, քան՝ դրականը: Փորձենք միասնաբար խնայել ամեն բան եւ շա-րունակականութիւն ապահովենք, որպէսզի կարելի ըլլայ ամեն բան իր ճիշդ տեղը դնել:

Դարձեալ կը կրկնեմ՝ բոլորս միասնաբար, ձեռք ձեռքի տուած, տա-կաւին քիչ ենք իսկայ մարտահրաւերները դիմագրաւելու, ա՛լ ուր մնաց անտարբերութեամբ, բամբասանքով, հեղինակագրկումով եւ դժուա-րութիւններ յառաջացնելով՝ յառաջ երթանք:

Կայունութեան հասնելու եւ գայն պահպանելու համար միասին աշ-խատելու կամքն ու հաւատքը ունենանք:

Մեր դպրոցները, միութիւնները, եկեղեցիները, հաստատութիւննե-րը՝ բոլորն ալ ժողովուրդին ծառայելու սկզբունքով հիմնուած են եւ տասնեակ տարիներով այս գաղութին մէջ վաստակ կերտած ու ներ-դրում ունեցած են:

Պահենք ու պահպանենք զանոնք՝ նաեւ այս օրերուն:

ՅԱԿՈԲ ԼԱՏՈՅԵԱՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԵՒ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ-ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ՝ «ՓՈԽԱԿԵՐՊՈՒՈՂ ՀԱՅԱՇԽԱՐՀ, ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ ԵՒ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ»

Երկուշաբթի, 14 սեպտեմբեր 2026-ին, Խաչա-տուր Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանին (ՅՊՄՀ) մէջ տե-ղի ունեցաւ «Փոխակերպուող հայաշխարհ. գործըն-թացներ եւ իրողութիւններ» միջազգային գիտաժո-ղով-աշխատաժողովը՝ կազմակերպութեամբ ՅՊՄՀ-ին եւ Հայկազեան համալսարանին:

Գիտաժողովը կու գար աւարտին հասցնելու 2022-ին (Երեւանի մէջ) եւ 2023-ին (Հայկազեանի մէջ) տեղի ունեցած «Հայութեան տեղաշարժերը եւ փոխակերպումները 20-րդ դարուն եւ 21-րդ դարու սկիզբին» վերնագիրով զոյգ գիտաժողովները:

Մասնագէտներու, հայագետներու եւ ուսանողե-րու ներկայութեան գիտաժողովին բացումը կատա-րեց ՅՊՄՀ-ի համաշխարհային պատմութեան ամ-պիոնի վարիչ փրոֆ. Խաչատուր Ստեփանեանը, որ բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ուրախու-թիւն յայտնեց այս երրորդ գիտաժողովին առիթով եւ իրաւիբց ՅՊՄՀ-ի նախագահ ղոկտոր Լիլիթ Մկրտչեանը, որ իր ողջունի խօսքը ուղղէ ներկաներին:

Ապա խօսք առաւ Հայկազեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան, հուսկ՝ Հայկազեան համալսարանի Հայ-կական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի տնօրէն փրոֆ. Անդրանիկ Տազեան եւ ՅՊՄՀ-ի պատմութեան եւ հասարակա-գիտութեան բաժանմունքի տեսուչ դոկտ. Էտկար Յովհաննիս-եան:



Գիտաժողովի 4 նիստերուն զեկոյցներ ներկայացուցին 7 մաս-նագետներ.

Դոկտ. Հրակ Փափագեան զեկուցեց «Ռ՛վ է հայը» հարցադրու-մին հետքերով» նիւթով,

Դոկտ. Լիլիթ Մնացականեան՝ «Հոգեխցը (trauma) եւ հայկա-կան ինքնութեան որոշ դրսեւորումներ»,

Դոկտ. Աշոտ Ոսկանեան՝ «Պետութիւն-սփիւռք» ճգնաժամ եւ հեռանկար»,

Հրայր Պալեան՝ «Ազգ-պետութիւն, սփիւռք եւ հայերու բնաւ չկառուցած հաստատութեանկան ճարտարապետութիւնը»:



Տիգրան Եկաւեան՝ «Իրական Հայաստան, ազգային պետու-թիւն եւ նորագոյն զարգացումներ»,

Արմենակ Թըքմաճեան՝ «Փոքր երկիր, համաշխարհային ցան-ցեր. հայերը եւ համաշխարհայնացման տարակերպութիւնը (paradox)»,

Փրոֆ. Արա Սայեղ՝ «Սփիւռքահայութեան փոխակերպումը համաշխարհայնացման եւ թուային արհեստագիտութիւններու հոլովոյթին մէջ»:

Գիտաժողովը յատկանշուեցաւ ներկայացուցչական լայն՝ թէ՛ աշխարհագրական, թէ՛ մասնագիտական, թէ՛ սերունդային բնոյ-թով: Իւրաքանչիւր զեկուցողի տրամադրուած էր մինչեւ 45 վայր-կեան, որով կարելի եղաւ համապարփակ ներկայացնել նիւթը՝ խօսիլ տեսական երեսակին մասին, կատարել պատումը ընթաց-քին, նկարագրել եւ արժեւորել ներկան ու տալ հեռանկարային զարգացումներ եւ լուծումներ:

Ուշագրաւ էր նաեւ այն, որ զեկուցաբերները իրենց նիւթը պատրաստած էին «դաշտային ուսումնասիրութիւններ»-ու հի-մամբ. անոնք կա՛մ ականատես-մասնակիցն էին դէպքերուն, կա՛մ դէպքերուն վերաբերեալ կատարած էին անմիջական դաշտային հետազօտութիւններ: Այս երեւոյթը անմիջականութիւն, առաւել շօշափելիութիւն եւ փաստացիութիւն հաղորդեց զեկոյցներուն, որոնք դարձան աւելի իմաստալից ու հասկնալի, եւ նիւթերը աւե-լիով ըմբռնելի դարձան բոլորին կողմէ, ու ըստ այդմ, արծարծուե-ցան, քննարկուեցան ու արժեւորուեցան:

Միւս կողմէն՝ պատշաճ տեղ տրուած էր նաեւ քննարկումնե-րուն, որոնց շնորհիւ իմաստաւորուեցաւ ձեռնարկին գիտաժողով-աշխատաժողով ձեւաչափը: Քննարկումները եղան բաց ու ազատ, սրտցաւ ու գիտական եւ յատկանշուեցան նաեւ փոխհաս-կացողական ու բացառապէս շինիչ ոգիով:

Գիտաժողովը բացառիկ էր նաեւ իր առօրեական, անմիջական այժմեականութեամբ: Կազմակերպիչ համալսարանները չէին վարանած քննարկման նիւթ դարձնել հայաշխարհի մերօրեայ կարեւորագոյն խնդիրներու իւրօրինակ մարտահրաւերային առաջնակարգային հարցեր:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մեր յօդուածագիրին մտածումներուն տեղ կու տանք՝ միաժամանակ նշելով, որ Դաշնակցութիւնը չէր կրնար անտարբեր մնալ հակասահմանադրական եւ եկեղեցական կանոնները ոտնակոխող իշխանութիւն-ներու միջամտող քաղաքականութեան: Նաեւ՝ քաղա-քական կուսակցութիւն մը խորհրդարանական ընտրա-պայքարներուն կը համագործակցի ազգային հիմ-նախնդիրներուն շուրջ՝ Ցեղասպանութիւն, Արցախ, սփիւռք, յստակ դիրքորոշում ունեցած եւ իր գաղափար-ները բաժնած քաղաքական գործիչներու եւ ուժերու հետ:

ԽԱՐ.

Չանգը ինչեց: Կարողացած գիրքը բազմոցին ձգեց, «Ռ՛վ կրնայ ըլլալ», մտածեց ու գնաց դուռը բանալու:

Սեմին կեցած էր միջահասակ, երեսունին դէռ չհա-սած, սեւ, գանգուր մազերով երիտասարդ մը:

- Բարե՛ւ,- ըսաւ ան,- դուք գիտէք ճանչնար, բայց ես այսօր որոշած եմ հայերու տունները այցելել եւ հարցում-ներ ուղղել: Կ'ընդունի՞ք կէս ժամ տրամադրել ինձի:

- Ձեր անո՞նը,- հարցուց տիկինը՝ քիչ մը շուարած, քիչ մը հետաքրքիր, քիչ մըն ալ խանդավա՞ռ՝ արտասո-վոր այս յայտարարութենէն:

- Գաղափա՛ր,- եղաւ պատասխանը: Տիկինը ժպտեցաւ.

- Գաղափա՛ր, հը՞մ... հրամեցե՛ք, Նստեցե՛ք:

«Մարդ տղուն անունը «Գաղափար» կը դնէ՞», հար-ցուց ինքնիրեն. «Լենին» անունով աշակերտ ունեցած էր, բայց... Գաղափա՛ր. խնդալը եկաւ, փորձեց ինքզին-քը զսպել ու անցաւ գործի: Հիւրին համար թէլ պատ-րաստե՛ր՝ գէշ չէր ըլլար. քովն ալ՝ քանի մը կրկնեի:

Երբ թէյի բաժակներով ծանրաբեռնուած ափսէն ներս բերաւ, Գաղափարը հիւրասենեակի դարաններուն վրայ շարուած գիրքերը աչքէ կ'անցընէր. երբեմն գիրք մը կ'առնէր, կը թերթատէր, տեղը կը դնէր:

- Հրամեցե՛ք,- ըսաւ,- թէյը պատրաստ է:

Տղան անմիջապէս՝ եկաւ, Նստաւ դիմացի բազկաթո-ռին վրայ:

Աղուոր, խոշո՛ր, սրճագոյն աչքեր ուներ ու խորունկ նայուածք: Թարթիչներն ալ՝ երկա՛ր, «սահնակի պէս», մտածեց:

- Տիկին,- ըսաւ Գաղափարը,- հարցումով մը սկսիմ մեր խօսակցութիւնը: Ուրա՞խ էք մեր ազգին վիճակէն:

Տիկինը ցնցուեցաւ: Ծի՛շդ սրտին դպած էր «Նստը»: Մտածելու պէտք ալ չունէր պատասխանելու համար:

- Ո՛չ, բացարձակապէս՝ ո՛չ,- ըսաւ:

- Ինչո՞ւ,- հարցաքննութիւնը շարունակեց դիմացինը:

Ինչո՞ւ յանկարծ տարօրինակ բան մը զգաց: Նայ-ւածքը պղտորած էր. դիմացը Նստող տղան լաւ չէր տես-ներ. գիտաերեւակայական պատմուածքի մը մէջ էր, ի՞նչ էր:

Կ'ուզէր պատասխանել, բայց խօսելու փոխարէն՝ կը մտածէր: Որքա՛ն ատեն էր՝ կը տուայտէր իր ազգի ներ-կայ վիճակով. ուրկե՛՞ սկսէր. իրեն կը թուէր, թէ ի՛նչ ալ ըսէր, ամբողջական պիտի չըլլար. այս վերջին տարինե-րուն դէպքերը այնքա՛ն արագ յաջորդէր էին իրարու. ամեն օր բան մը պատահէր էր թէ՛ աշխարհին, թէ՛ հայ-րենիքին: Մարդիկն ալ փոխուէր էին: Անոնց մասին այ-սօրուան ըսածդ վաղը կրնար ճիշդ չըլլալ. չարացեր էին, ամբարտաւան դարձեր, ինկեր էին անկրթութեան խո-րունկ փոսը:

Ինչո՞ւ...

Մտածումները աչէն ձախ, ձախէն աչ կ'երթեւեկէին, մինչ Գաղափարը հանգի՛ստ ընկողմանած էր ուղեղի բազկաթոռներէն մէկուն մէջ:

Առաջին եւ զինք ամենէն աւելի խոցող մտածումը Հայ յեղափոխական դաշնակցութեան կը վերաբերէր: Ամէն կողմէն, ո՛վ ուզէս, չուզէս, աչ ու ահեակ Դաշնակցու-թիւն հարուածելու ելած էր: Ամիսներ առաջ Ազգային ժողովի բեմէն լսած էր, թէ ՀՅԴ-ին արժեքը միայն իին օրերու ազատագրական պայքարին մէջ կայացած էր, թէ՛ այս օրերուն անոր հոգեհանգիստն էր, թէ՛ ան իր ձեռքով գրած էր մահախօսականը: Պատգամաւորնե-րէն մէկը զբարդած էր ՀՅԴ-ի ծրագրով, դաշնակցականի երդումով, «Մահ կամ ազատութիւն» կարգախօսով...

Ուրիշ մը բաւական խնացուցած էր զինք, երբ բան մը լա՛ւ գիտցողի ոճով, բառերու շարքին գիւտը ըրած էր. ըստ անոր, ՀՅԴ-ի կարգախօսին «Մահ» բառը «ազատութիւն» բառէն առաջ դրուած էր, որովհետեւ ՀՅԴ-ն Նախ մահը կ'ուզէր. հետեւաբար, զոգւշ, մահա-բեր կուսակցութիւնն էր...

Հապա այդ մի՛ւս դրուագը... Երբ Երեւանի Դաշնակ-ցութեան գրասենեակին պատին զետեղուած եռագոյնի ձողը կքած էր քսմիւն... ինքզինք խելացի կարծող անձ մը «վիզուալ-սոցիոլոկիա» (հիւսնալի հայերէս...) տեսու-թիւնը կիրարկելով՝ «փաստած էր», որ ահա՛, կը տես-նե՛ք՝ ՀՅԴ-ի նպատակը, իրօք հայ պետականութիւն չու-նենալն է...

«Իմաստակ», «անլուրջ», «խակ» ածականները ան-ցան մտքէն. «Երիտասարդ են. ի՞նչ գիտնալ»: Նոյն ատեն ուրիշ մտածում մը յայտնուեցաւ ուղեղին. «Երի-տասարդ են, այո՛, բայց ինչո՞ւ՝ այսքան ամբարտաւան ու գոռոզ դարձած են. ու՞ր տարեկան են տակաւին. ի՞նչ իրաւունքով այսպէս կը խօսին կուսակցութեան մը մա-սին, որ իրենց տուածին հազարապատիկը նուիրած է իր ժողովուրդին... Արդեօք ի՞նչ ըրած են իրենք...»:

Սկսաւ մտովի հակաճառել. սիրտը կը տրոփէր. ա, ք, գ, դ եկան շարուեցան իրարու ետեւ ու հարուածեցին... կարծես ձեռքի մատները մէկ-մէկ կը բանար ու թափ կու տար Դաշնակցութեան եւ սփիւռքի տկարացումը ծրա-գրած ուժերուն:

Ա.- Ոչ միայն հայ ազատագրական պայքարի, կամ՝ Հայաստանի Հանրապետութեան կերտումի օրերուն, այլ նաեւ՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին, սուրիահայութեան ապրած ծա՛նր օրերուն Հայ յեղափոխական դաշնակցութեան խաղացած դերը եղած է հիմնական: Ետեւաբար ըսել, որ իր արժեքը ազատագրական պայքարին մէջ կը կայանայ միայն, իրականութեան չի համապատասխանէր:

Բ.- Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրե-րուն դաշնակցական երիտասարդներ հետեւած են «Մահ կամ ազատութիւն» կարգախօսին եւ իրենց կեանքը վտանգի ենթարկելով՝ պաշտպանած են հայ ընտանիքներ եւ հաց ու կերակուր հասցուցած անոնց:

Եւ, այո՛, ընտիր տղաք զոհուած են, որպէսզի իրենց հայրենակիցները ապրին ազատ ու հանգիստ:

Գ.- Տգիտութիւնը մեղք չէ, բայց ամեն բան գիտցողի դերը ստանձնելը կամ իրականութենէն գիտակցաբար փախչիլը եւ խելկատակութեան մօտենալը, այո՛, յաւ-ցանք է:

Դ.- Սփիւռքը հայրենի հողէն կտրուած է: Սփիւռքի մէջ դիմանալը, կազմակերպուիլը, մարդէն լեզու եւ ոգի պահելը անհաւատալիօրէն դժուար է, եւ սփիւռքի բոլո՛ր կուսակցութիւնները հոսանքի վեր թիավարելով՝ յաջո-ղած են ազգային կամոյցներու շուրջ հաւաքել Ցեղաս-պանութենէն ետք հասած սերունդները, անոնց փոխան-ցելով ազգային ինքնութիւն, լեզու եւ հայրենիքի ամո՛ր սեր: Չօրութեանկան հայրենիք մը ստեղծելով՝ այդ կու-սակցութիւնները, որոնց շարքին՝ ՀՅԴ-ը, տարաբնոյթ հաւաքականութիւններ հայրենիքին կապուած պահած են: Յարգանք՝ իրենց:

Յուզուած էր: Նայուածքը պատուհանէն դուրս ուղ-ղեց. ծառերուն կանաչն ու երկնքին կապոյտը հան-դա՛րտ կը ծփային մթնոլորտին մէջ: Անաչա՛ռ էր արդ-եօք. առարկայաւա՛ն էր: Աչքերը դարձուց դէպի Գաղա-փարը, որ շատո՛րք լուծուած էր Էութեանը մէջ: Հարցերը երկու կողմէն պէտք էր դիտէր:

Շարունակեց.

Ե.- Նոյն սփիւռքը ազդեցութիւններ կրած է տունեալ երկրի կենցաղային մշակոյթէն եւ դժբախտաբար ընկա-լած է նաեւ յոռի գիծեր, որոնցմէ գերծ է մնացած ՀՅԴ-ը: Տակաւի՛ն, Դաշնակցութիւնը, Հայաստանի ներկա՛յ հանրապետութիւնը ենթակայ եղած են ճնշումներու, թափանցուած եղած են մեծ երկիրներու գործակալնե-րով ու օրուան աշխարհաքաղաքական վիճակին հետ տարուբերուած են աչ ու ձախ՝ միշտ հաւատալով, որ կը ծառայէ հայութեան եւ հայրենիքի շահերուն:

2.- Այդ ծիրէն ներս պէտք է դիտել Պաղ պատերազմի օրերուն ՀՅԴ-ի բռնած դիրքը Էջմիածնի դէմ եւ այս օրե-րու «փարումը» Պարեգին Բ. վեհափառին, 1958-ի եղ-բայրասպան կռիւները դաշնակցականներու եւ ինչակ-եաններու միջեւ, ու 2026-ի միասնականութեան ճիգերը՝ ռուսամէտ կուսակցութիւններու հետ... Սակայն նոյնա-նման բան մը չի՞ պատահիր արդեօք Հայաստանի ներ-կայ ղեկավարութեան, որ անկախութիւն կը գովերգէ,

ԱՆԻ ԱՍՏՈՒՐԵԱՆ

Շաբ.ը՝ Էջ 6

ՄՈՒՍԱ ԼԵՌԷ՝ ԱՆՍԱՍԱՆ...

Շարունակում 3-րդ էջին



Մուսա Լեռան նոր տունը, հայկական բերդը, ուր սերունդէ սերունդ կը պահպանուին հերոսամարտի աւանդն ու ազգային դիմագիծը: Մուսա Լեռան պատգամը յստակ է՝ չիրաժարիլ, չմոռնալ, չբաժնուիլ եւ հաւատարիմ մնալ այն հողին ու արժէքներուն, որոնց համար զոհուեցան մեր նահատակները», ըսաւ Պալապանեան:

ԿԿ-ի ներկայացուցիչը յայտնեց, որ երբ կը խօսինք հողային արժէքներու մասին, չենք կրնար չխօսիլ նաեւ Հայաստանի մասին: Արդարեւ, Հայաստանը եւ սփիւռքը իրարու հակադիր իրականութիւններ չեն, այլ նոյն ժողովուրդի կենսատարածքներն են՝ տարբեր դերերով ու պատասխանատուութիւններով: Ան այդ, Պալապանեան հիմնական նկատեց հեռու մնալ պառակտիչ քաղաքականութենէ, խտրութիւն չդնել հայ ժողովուրդի տարբեր հատուածներուն միջեւ, արժեւորել սփիւռքի ներուժը եւ զօրացնել հայրենի պետականութիւնը: Այս ծիրին մէջ ալ ան Մուսա Լեռն նկատեց միասնականութեան աղբիւր, պայքար՝ մեր իրաւունքներուն համար, հաւատք՝ ազգային մեր խորհրդանիշներուն ու ապագային հանդէպ, նաեւ յիշեցում՝ որ պատմութիւնը ոչ թէ վերաշարադրելու, այլ իւրացնելու եւ

անոր պատգամը նոր սերունդներուն փոխանցելու պարտաւորութիւնը ունինք:

Այսօր Պալապանեան շեշտեց, որ այսօր Մուսա Լեռան ժառանգորդները՝ Այնճարէն մինչեւ Վազգֆ եւ մինչեւ հայրենի Մուսա Լեռ, կը շարունակեն հերոսներուն ուխտը՝ ազատութեան դրօշը բարձր պահելով եւ պայքարելով վաղուան հզօր ու միացեալ հայրենիքի համար: Ան դիտել տուաւ, որ այս պայքարը կ'ընդգրկէ Հայաստանի Հանրապետութեան հզօրացումը, Արցախի ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութիւնը, Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման պահանջը, սփիւռքի մէջ հայապահպանութիւնը եւ հայկական Այնճարի ազգային դիմագիծի պահպանումը: Ան այդ, ան եզրափակեց, որ Մուսա Լեռան նահատակներուն յիշատակը, ուրեմն, միայն հպարտութեան աղբիւր չէ, այլ սերունդներուն փոխանցուած պարտաւորութիւն՝ պահպանելու մեր ինքնութիւնը, զօրացնելու հայրենիքն ու պետականութիւնը, ամրապնդելու սփիւռքի հայկական ներկայութիւնը եւ միասնական ուժով կերտելու վաղուան ամբողջական հայրենիքը: (Խօսքին ամբողջութիւնը կու տանք մեր էջերով):



Այս ազգային հայրենասիրական երգերով մթնոլորտը խանդավառեց ու Մուսա Լեռան ոգին գօտեպնդեց Ղազար Քեօշկերեան:

Ձեռնարկը իր աւարտին հասաւ Մուսա Լեռան տիղ զուռայի կշռոյթներով կազմուած աւանդական շուրջպարով:

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԸ...

Շարունակում 3-րդ էջին

Պայքարի այդ ոգին էր, որ վերստին յարութիւն առաւ այս անգամ հայկական Այնճարի մէջ՝

- որպէսզի այդ ոգիով դաստիարակուին սերունդները
 - որպէսզի մնայ Մուսա Լեռան միասնականութիւնը
 - որպէսզի անտեղիտալի մասն հերոսամարտի նահատակներուն աւանդն ու ժառանգութիւնը
 - որպէսզի հզօրանայ հայրենիքը եւ պետականութիւնը
 - որպէսզի համախմբուի ազգը:
- Հայկական Այնճարէն մինչեւ Վազգֆի այսօրուան գիւղը եւ մինչեւ հայրենի Մուսա Լեռ, հերոսամարտ կերտած ժողովուր-

դի ժառանգորդները վերստին կը պարզեն ազատութեան դրօշը, կը վառահաստատեն հերոսներուն ուխտը եւ կը պայքարին վաղուան հզօր ու միացեալ հայրենիքին համար:

Կը պայքարին թէ՛ Արարատին եւ թէ՛ Արագածին համար: Կը պայքարին թէ՛ Հայաստանի Հանրապետութեան հզօրացման, թէ՛ Արցախի ժողովուրդի իրաւունքներուն եւ թէ՛ Ցեղասպանութեան միջազգային ճանաչման համար: Կը պայքարին սփիւռքի մէջ հայապահպանման համար: Իրենց դասագիրքներուն մէջ ամրագրուած կը պահեն հերոսապատումներն ու հայ եկեղեցւոյ դասանիւթը:

Կը պայքարին հայկական Այնճարի դիմագիծի պահպանման համար, որպէսզի վառ մնան Մուսա Լեռան նահատակներուն աւանդն ու ոգին:

Կը պայքարին՝ վաղուան ամբողջական-հայրենիքին ու ազգային պետականութեան հզօրացումին համար:

** ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի խօսք՝ արտաստուած Մուսա Լեռան հերոսամարտի 111-ամեակի եւ Այնճարի հիմնադրութեան 87-ամեակի պաշտօնական հանդիսութեան:*

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10 11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- ՀՐՈՒՋՈՒԿԱՆ
1. Դեռահասակ - Իմացիոն:
 2. Ճարտարապետի - Հայաստանի ժողովուրդի ծանօթ:
 3. Այբուբենէն - Դաճիկի երկերէն՝ «... Ազատագր» - Աջ:
 4. Անալիզի կեղծ - Հանգրուան:
 5. Նկարչական կարմիր ներկ - Լեցուն:
 6. Շանի - Մանդ:
 7. Բաժանումի գիծ - Հեծել:
 8. Նախաճաշիկ - Մաքրութեան խրճակ:
 9. Ցուցական ածական - Հոյլ - Վիշու առաւելում:
 10. Օդի մէջէն սլացող - Փխաշար:
 11. Ընդունելի - Կատարագի զազան - Անճառական դերանուն:

- ՈՐՈՂԱԳՆԱԳ
1. Ֆրանսական «Միլիտ» տիպի տղան երու հնարիչ:
 2. Յոյն դից - Արարական տար ատու:
 3. Սուտակի լիճերէն - Կանխի իւրաքանչիւր մաս - Նաեւ:
 4. Տանիք - Նորապետ կիւ:
 5. Պատարագի բաժակ - Սպանացի գեղանկարիչ:
 6. Մորթե պարկ - Հայաստանական շաղկապ - Պատուի աղումագ:
 7. Երեկոյ - Ձայնակից տառեր:
 8. Անկողմնակալ:
 9. Սերմնափակ - Ա. Մ. Նահանգներէն:
 10. Միւս - Թշու հոյզով պտուղ:
 11. Անճառական կերտ մասնիկ - Փակակը - Կակուղ ուտելիք:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10 11
1	5			3		7				4
2			7				5			
3						9				
4	4				1					9
5			5	2		3	8			
6						6				1
7					5					
8			2				3			
9										
10	1			8		4				5
11										

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնաւորով (9x9) կազմուած գեղատեղեւ բաղկացած է իւրաքանչիւր 9 խառակաւի հազուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր խառակաւի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 խառակաւի մէջ իւրաքանչիւր բաժին ունենայ ձեռն թուանշաններով իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ոչ մէկ պարագայի աւտոմատած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Այսպէս համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ խառակաւիներում մէջ զետեղուած են:

ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒՆ ԼՈՒԵՈՒՄՆԵՐԸ

ԽԱՂԵՐՈՒՆ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10 11
1	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ
2	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ
3	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ
4	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ
5	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ
6	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ
7	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ
8	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ
9	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ
10	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ
11	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ

ԳԱՂԱՓԱՐԸ

Շարունակում 5-րդ էջին

«տիւնիսիւքացի» կը կրկնէ ու կը կըրկնէ, բայց այլ լծակներէ կախեալ է, զինանշանն ու խորհրդանիշ կ'արժեզրկէ՝ կամակատար ըլլալով այլոց պահանջներուն:

Կեցաւ: Ինք տակաւին կը հաւատար, որ սխալ եղած էր պարոն վարչապետը եւ իր խումբը «թուրք» կամ «դաւաճան» կոչելը: Ճիշդ չէր եղած ծեծի կամ գնդակահարման թատերական ներկայացումներ կազմակերպելը, դեղին ու կարմիր քարտեր ցոյց տալը... Սխալ եղած էր անգամ մը եւս Ռոպերթ Զոհարեանի խումբին միանալը:

Վերոյիշեալ արարքները սրած էին կիքերը ու պառակտած՝ ժողովուրդը: Երանի ՀՀԴ-ն ժողովուրդին ծառայած ըլլար լուռ ու մուշ, առանց իշխանութեան մաս կազմելու նպատակի: Երանի որեւէ դաշինքի միացած չըլլար ու հաւատարիմ մնացած ըլլար իր սկզբունքներուն...

Միւս կողմէ՝ որքան տխուր էր ի տես Հայաստանի ներկայ քաղաքական կեանքի պատկերին. ոչ որակ կար, ոչ խորք... դիմացինը արհամարհական խօսքերով վարկաբեկելը դարձած էր նոր չափանիշ: Դարուն հիւսնդութիւնը վարակած էր պետութեան գրեթէ բոլոր պատասխանատուները: Դիմատետրի էջերէն մինչեւ Ազգային ժողովի բեմ՝ հայիոյախառն լեզուն էր տիրապետողը. հայերէնն ալ հայերէն չէր... **Օսյէլիսիւքեան** դիտումով՝ **սիւն-ժիզմէ** պարպուած **մեւեմներ** կը դրկէր խաղաղութեան, ինքնիշխանութեան, իրաւ՝ պետութեան մասին... Վերջին

նորոյթն ալ սփիւռքի դերին սահմանէ, բայց այլ լծակներէ կախեալ է, զինանշանն ու խորհրդանիշ կ'արժեզրկէ՝ կամակատար ըլլալով այլոց պահանջներուն:

Կեցաւ: Ինք տակաւին կը հաւատար, որ սխալ եղած էր պարոն վարչապետը եւ իր խումբը «թուրք» կամ «դաւաճան» կոչելը: Ճիշդ չէր եղած ծեծի կամ գնդակահարման թատերական ներկայացումներ կազմակերպելը, դեղին ու կարմիր քարտեր ցոյց տալը... Սխալ եղած էր անգամ մը եւս Ռոպերթ Զոհարեանի խումբին միանալը:

Վերոյիշեալ արարքները սրած էին կիքերը ու պառակտած՝ ժողովուրդը: Երանի ՀՀԴ-ն ժողովուրդին ծառայած ըլլար լուռ ու մուշ, առանց իշխանութեան մաս կազմելու նպատակի: Երանի որեւէ դաշինքի միացած չըլլար ու հաւատարիմ մնացած ըլլար իր սկզբունքներուն...

Միւս կողմէ՝ որքան տխուր էր ի տես Հայաստանի ներկայ քաղաքական կեանքի պատկերին. ոչ որակ կար, ոչ խորք... դիմացինը արհամարհական խօսքերով վարկաբեկելը դարձած էր նոր չափանիշ: Դարուն հիւսնդութիւնը վարակած էր պետութեան գրեթէ բոլոր պատասխանատուները: Դիմատետրի էջերէն մինչեւ Ազգային ժողովի բեմ՝ հայիոյախառն լեզուն էր տիրապետողը. հայերէնն ալ հայերէն չէր... **Օսյէլիսիւքեան** դիտումով՝ **սիւն-ժիզմէ** պարպուած **մեւեմներ** կը դրկէր խաղաղութեան, ինքնիշխանութեան, իրաւ՝ պետութեան մասին... Վերջին

Միւս կողմէ՝ որքան տխուր էր ի տես Հայաստանի ներկայ քաղաքական կեանքի պատկերին. ոչ որակ կար, ոչ խորք... դիմացինը արհամարհական խօսքերով վարկաբեկելը դարձած էր նոր չափանիշ: Դարուն հիւսնդութիւնը վարակած էր պետութեան գրեթէ բոլոր պատասխանատուները: Դիմատետրի էջերէն մինչեւ Ազգային ժողովի բեմ՝ հայիոյախառն լեզուն էր տիրապետողը. հայերէնն ալ հայերէն չէր... **Օսյէլիսիւքեան** դիտումով՝ **սիւն-ժիզմէ** պարպուած **մեւեմներ** կը դրկէր խաղաղութեան, ինքնիշխանութեան, իրաւ՝ պետութեան մասին... Վերջին

Միւս կողմէ՝ որքան տխուր էր ի տես Հայաստանի ներկայ քաղաքական կեանքի պատկերին. ոչ որակ կար, ոչ խորք... դիմացինը արհամարհական խօսքերով վարկաբեկելը դարձած էր նոր չափանիշ: Դարուն հիւսնդութիւնը վարակած էր պետութեան գրեթէ բոլոր պատասխանատուները: Դիմատետրի էջերէն մինչեւ Ազգային ժողովի բեմ՝ հայիոյախառն լեզուն էր տիրապետողը. հայերէնն ալ հայերէն չէր... **Օսյէլիսիւքեան** դիտումով՝ **սիւն-ժիզմէ** պարպուած **մեւեմներ** կը դրկէր խաղաղութեան, ինքնիշխանութեան, իրաւ՝ պետութեան մասին... Վերջին

Միւս կողմէ՝ որքան տխուր էր ի տես Հայաստանի ներկայ քաղաքական կեանքի պատկերին. ոչ որակ կար, ոչ խորք... դիմացինը արհամարհական խօսքերով վարկաբեկելը դարձած էր նոր չափանիշ: Դարուն հիւսնդութիւնը վարակած էր պետութեան գրեթէ բոլոր պատասխանատուները: Դիմատետրի էջերէն մինչեւ Ազգային ժողովի բեմ՝ հայիոյախառն լեզուն էր տիրապետողը. հայերէնն ալ հայերէն չէր... **Օսյէլիսիւքեան** դիտումով՝ **սիւն-ժիզմէ** պարպուած **մեւեմներ** կը դրկէր խաղաղութեան, ինքնիշխանութեան, իրաւ՝ պետութեան մասին... Վերջին

Միւս կողմէ՝ որքան տխուր էր ի տես Հայաստանի ներկայ քաղաքական կեանքի պատկերին. ոչ որակ կար, ոչ խորք... դիմացինը արհամարհական խօսքերով վարկաբեկելը դարձած էր նոր չափանիշ: Դարուն հիւսնդութիւնը վարակած էր պետութեան գրեթէ բոլոր պատասխանատուները: Դիմատետրի էջերէն մինչեւ Ազգային ժողովի բեմ՝ հայիոյախառն լեզուն էր տիրապետողը. հայերէնն ալ հայերէն չէր... **Օսյէլիսիւքեան** դիտումով՝ **սիւն-ժիզմէ** պարպուած **մեւեմներ** կը դրկէր խաղաղութեան, ինքնիշխանութեան, իրաւ՝ պետութեան մասին... Վերջին

Միւս կողմէ՝ որքան տխուր էր ի տես Հայաստանի ներկայ քաղաքական կեանքի պատկերին. ոչ որակ կար, ոչ խորք... դիմացինը արհամարհական խօսքերով վարկաբեկելը դարձած էր նոր չափանիշ: Դարուն հիւսնդութիւնը վարակած էր պետութեան գրեթէ բոլոր պատասխանատուները: Դիմատետրի էջերէն մինչեւ Ազգային ժողովի բեմ՝ հայիոյախառն լեզուն էր տիրապետողը. հայերէնն ալ հայերէն չէր... **Օսյէլիսիւքեան** դիտումով՝ **սիւն-ժիզմէ** պարպուած **մեւեմներ** կը դրկէր խաղաղութեան, ինքնիշխանութեան, իրաւ՝ պետութեան մասին... Վերջին

Միւս կողմէ՝ որքան տխուր էր ի տես Հայաստանի ներկայ քաղաքական կեանքի պատկերին. ոչ որակ կար, ոչ խորք... դիմացինը արհամարհական խօսքերով վարկաբեկելը դարձած էր նոր չափանիշ: Դարուն հիւսնդութիւնը վարակած էր պետութեան գրեթէ բոլոր պատասխանատուները: Դիմատետրի էջերէն մինչեւ Ազգային ժողովի բեմ՝ հայիոյախառն լեզուն էր տիրապետողը. հայերէնն ալ հայերէն չէր... **Օսյէլիսիւքեան** դիտումով՝ **սիւն-ժիզմէ** պարպուած **մեւեմներ** կը դրկէր խաղաղութեան, ինքնիշխանութեան, իրաւ՝ պետութեան մասին... Վերջին

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ...

Շարունակում 4-րդ էջին

«Շանթ» ուսանողական միութեան ատենապետ Ալիք Պոյաճեան ներկայացուց միութեան տեսլականն ու հարկութեան ապագային հանդէպ անոր յանձնառութիւնը:

Սթիւ Տոնեան ամփոփ գիծերու մէջ ներկայացուց Զալիֆորնիոյ մէջ հայութեան հաստատման պատմութիւնը եւ այն դերը, զոր Հայ մշակութային հիմնարկութիւնն ու ՀՀԴ-ն ունեցած են համայնքի կազմակերպման մէջ:

ՀՀԴ Բիւրոյի անդամ Տարոն Տերհաջատուրեան անդրադարձաւ Հա-

յաստանի Հանրապետութեան ներկայ կացութեան եւ սփիւռքահայութեան խորհրդածողովի դերին:

Օրուան գլխաւոր իմաստաւորներն էին Յարութեւն Վիքի Մարաշլեանները: Ազգային բարերարներու

Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ՝ ԶՄԸՄ ՊԵՅՐՈՒԹ -
ՇԱՊԱՊ ՍԱՔԱՖԻ ԶԵՐԻ

Վաղը վերջ կը գտնէ 2025-2026 տարեշրջանի Դ. դասակարգի ախոյեանութիւնը, որմէ ետը յստակ պիտի ըլլան Գ. դասակարգ բարձրացող 4 խումբերը:

Երկու խմբակներու բաժնուած 12 խումբերէն 4 խումբեր իրաւունք պիտի ունենան մասնակցելու 2026-2027 տարեշրջանի Գ. դասակարգին:

ԶՄԸՄ ՊԵՐՈՒԹ, որ մաս կը կազմէ Բ. խմբակին, կը գրաւէ առաջին դիրքը՝ յաղթելէ ետը իր առաջին 3 մրցումներուն:

Անցեալ կիրակի իր 4-րդ մրցումին ԶՄԸՄ ՊԵՐՈՒԹ լաւ վիճակի մէջ չէր, բայց պարտութիւնը մասնաւոր բան չփոխեց, այլ պարզապէս յետաձգեց աւելի կանուխ Գ. դասակարգ բարձրանալու իրաւունքը:

Սաֆայի դաշտին վրայ ժամը 15:00-ին ԶՄԸՄ ՊԵՐՈՒԹ դաշտ պիտի ներկայանայ պարտութեան մատնելու համար հիւսիսի Շապապ Սաքաֆի Զերի խումբը:

Մրցակից խումբը յոյս չունի բարձրանալու Գ. դասակարգ, բայց ասիկա ըսել չէ, որ մեր տղաքը հանգիստ պէտք է խաղան եւ դիւրութեամբ կրնան յաղթել մրցակիցին:

ԶՄԸՄ ՊԵՐՈՒԹի տղաքը այս տարեշրջանի իրենց բոլոր մրցումներուն ալ շատ լոյսութեամբ կը մօտենային իրենց մրցակիցներուն եւ այդպէս ալ պէտք է ընեն վաղուան մրցումին:

Մրցակիցին ոչ մէկ առիթ պէտք է տրուի դաշտին կտրոնէն յառաջանալու՝ բարձր ճնշումով եւ առիթներ ստեղծելով, միայն կարելոր պարագաներ:

LEBANESE CHAMPIONSHIP				
FOURTH DIVISION - 2025/2026 GROUP B				
TEAM RANK	GP	GD	PTS	
1. HOMENETMEN	4	+8	9	
2. AL GHADIR HARISS	4	0	9	
3. AL ARABI AKKAR	4	+3	7	
4. AL SHABAB AL THAQAFI AL HIRI	4	-1	4	
5. AL NASR KAMED ALLOUZ	4	-6	3	
6. AL SAFA CHOUEIFAT (BYBLOS)	4	-4	2	

որուն տրիպլիկ կատարելով, եւ այս տարեշրջանի մեր ուժով՝ խմբային խաղով յաղթանակ կերտելով, բարձրանալու համար Գ. դասակարգ:

ԶՄԸՄ ՊԵՐՈՒԹի նման 9 կետ ունի Ղատիր Զարիս, որ պիտի մրցի Սաֆա Շուէֆաթի դէմ, մինչ Արապի Աքքար Ռիատի, որ 2 կետով ետ կը մնայ առաջին երկուքէն (7 կետ), պիտի մրցի Նասր Զամետ Նոգի դէմ:

Այսօր տեղի կ'ունենան Ա. խմբակի վերջին մրցումները: Այս խմբակին մէջ ոչ մէկ բան յստակ է, եւ մինչեւ վերջին դիրքերը գրաւող խումբերը յոյս ունին բարձրանալու Գ. դասակարգ:

Շապապ Պըրժ եւ Ֆուսուա Ռիատի 7-ական կետեր ունին, Ռայան Սարաֆանտ 6 կետ ունի, Ղազգա Ռիատի 5 կետ, իսկ Ռաուտա Տըքուան եւ Նըմմ Մաարաքէ՝ 4-ական կետեր ունին:

ԲՈՆՅԱՍՏԱՐՏ

ԷԼԻՇԱ ԲՈՉԱՐԵԱՆ
ԶԱՍԱԻ ԿԻՍԱՄԱՐՏԱԿԱՆ

Մինչեւ 65 քկ կշիռի կարգին մէջ, հայ բռնցքամարտիկ Էլիզա Բոչարեան Զայաստանի հաւաքականին ապահովեց առաջին մետալը, Սոֆիայի (Պուկարիա) մէջ տեղի ունեցող 2026-ի Եւրոպայի բռնցքամարտի ախոյեանութեան:

Բառորդ աւարտականին Բոչարեան նաք-առի ենթարկեց իր ռումանացի մրցակից Անտար Նիքոլեթան՝ երկրորդ ռաունտին:

Այս յաղթանակը եղաւ Էլիզայի երրորդ յաջորդական յաղթանակը՝ Նախապէս յաղթելէ ետը Սպանիոյ եւ Ալպանիոյ իր մրցակիցներուն:



Էլիզա այսօր կը մրցի ռուս Ազալիա Ամինեայի դէմ: Նշենք, որ տղոց քառորդ աւարտականի մրցումներուն հասած են նաեւ Դաւիթ Զայոյեան եւ Ռուտովֆ Գարբոյեան:

ՈՒՍԱՆ ԱՄԱԳԵԱՆ-ԿՈՍԵՆ ԶՐԱԻՐՈՒԹՅԱՒ...
ՄԻԱՅԵԱՆ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԶԱՄԱՔԱԿԱՆ

Զայ ֆուլթայլիստ Ռոման Աւագեան-Կոմսե հրաւիրուեցաւ Միացեալ Նահանգներու պատանիներու (17 տարեկանէ վար) ազգային խումբ, միջազգային հաւաքին մասնակցելու համար Սպանիոյ մէջ:

Ամերիկեան հաւաքականը Մուրսիայի մէջ կը մասնակցի մրցաշարքի մը, որուն ընթացքին 4 բարեկամական մրցումներ պիտի ունենայ Նետերլանտներու, Ֆրանսայի, Սկոտլանդի եւ Պելճիքայի հաւաքականներուն դէմ: Աւագեանի հրաւերին մասին հաստատած է Նախ անոր գերմանական Մայնց ակումբը:

Այսպիսով, 16 տարեկան Ռոմանի արտասովոր ճանապարհը կը շարունակուի միջազգային մակարդակով: Ան Նախապէս մասնակցած էր Զայաստանի եւ Մեքսիքայի պատանեկան հաւաքականներուն հետ եւ այժմ կարեւորութիւն ստացած է հանդես գալու Միացեալ Նահանգներու հաւաքականին հետ:

Աւագեան ծնած է Միացեալ Նահանգներ եւ հոր կողմէն հայկական արմատներ ունի, իսկ անոր մայրը մեքսիքացի է: Իր ծագումին շնորհիւ ֆուլթայլիստը կապուած է երեք երկիրներուն հետ:



2024-ին ան Զայաստանի պատանիներու երկու խումբերուն հետ ալ ելոյթներ ունեցած է 14 եւ 15 տարեկանէ վար: Ան մասնակցած է «Եւր. Է. Էֆ. Ա.»-ի զարգացման մրցաշարքին եւ տարի մը ետք Երեւանի մէջ տեղի ունեցած 15 տարեկանին վար միջազգային մրցաշարքին: Աւագեան կոլ ալ նշանակած է Ուզպէիստանի դէմ մրցումին, ինչպէս նաեւ Կրաստակի դէմ վրձնական փետլթիթներուն ընթացքին Նպատակին հասած է փետլթիթով մը:

Այս տարուան մարտին ան իրաւորած է Մեքսիքայի 16 տարեկանէ վար հաւաքական եւ մասնակցած Ֆրանսայի մէջ տեղի ունեցած միջազգային մրցաշարքին:

Այժմ Աւագեան իր առաջին հրաւերը ստացած է Միացեալ Նահանգներու 17 տարեկանէ վար մակարդակով:

Ակումբի մակարդակով Ռոման

Շար.ը՝ էջ 8

ԶԲԸՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԸՆՏԱՆԻԸԸ ԶԵՆՆԱՐԿԵՅ

ԶԱՄԱՇԽԱՐՅԱՅԻՆ ՎԱՉԲ՝ ՅԱՆՈՒՆ
«ՆԱՅԻՐԻ ՃԱՄԲԱՐ»-ԻՆ

Անցեալ կիրակի, առաւօտեան կանուխ ժամերուն, Զայական բարեգործական ընդհանուր միութեան Լիբանանի ընտանիքը անսաց միութեան համաշխարհային կոչին եւ իր բաժին ներդրումը ունեցաւ Զայաստանի մէջ արցախցի երեխաներուն անվճար ժամանց տրամադրող «Նայիրի ճամբար»-ին աջակցելու գործին մէջ: Զայաստանի եւ սփիւռքահայ համայնքներու նման լիբանանահայերը եւս իրենց նպատը բերին՝ մասնակցելով «Զամաշխարհային վազբ» յանուն Նայիրի ճամբարին» խորագրեալ զուարճալի ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Մարինա Տըպպայի մէջ:

Շուրջ 250 մասնակիցներ եկան իրենց երեխաներուն ընկերակցութեամբ եւ շուրջ երկու ժամ շարունակ ուրախ մթնոլորտ ստեղծեցին: Իրենց կարգին վազելու եկած էին ԶԲԸՄ-ի Լիբանանի Շրջանային յանձնաժողովի անդամներ, Կրթական յանձնախումբէն, Կեդրոնական վարչութեան, Տիկնանց համախումբի եւ ԶԲԸՄ-ի վարժարաններու շրջանաւարտներու համախմբումի անդամներ:



Հինգ քիլոմէթր երկարող երթուղիի հիմնական Նախապատրաստութիւնները արդէն իսկ կատարած էին Նախորդող շաբաթներուն՝ համագործակցելով Նազգաշի եւ Տըպպայի քաղաքապետութիւններուն հետ, ինչպէս նաեւ Լիբանանեան բանակի, ներքին ապահովութեան ուժերու, քաղաքացիական

Շար.ը՝ էջ 8

«ԵՈՒ. ԷՖ. ՍԻ.»

ԾԱՌՈՒԿԵԱՆ ԵՒ ՌՈՒՖԻ ՊԵՏԸ Ե ԴԱԴԱՐ ԱՌՆԵՆ

Կիրակի առաւօտեան բուռն պայքարէ ետը, «Եւր. Էֆ. Սի. 331» երեկոյեան կարեւորագոյն մրցումներէն մեկուն, հայ մարտիկ Արման Ծառուկեան նաք-առի ենթարկած էր պրագիլցի Մաուրիսիո Ռուֆին եւ դարձած ախոյեանութեան թիւ 1 թէկնածու:

Այս մենամարտէն երկու օր ետք բժշկական քննութիւններու ենթարկուելէ ետք, երկու մարտիկներուն արգիլուեցաւ որեւէ մարտական մրցումի մասնակցիլ մօտ 60 օր: Միայն 45 օր ետք անոնք կրնան բժշկական հաստատումէ ետք մասնակցիլ մենամարտի մը, մասնաւոր որ երկուքին ալ աչքին շուրջ լուրջ պատըռածք կայ:

Հակառակ այս զգուշացումին, Արման Ծառուկեան յառաջիկայ 23 հոկտեմբերին «ՌԱՖ 14» մրցաշարքի գծով պիտի մրցի ամերիկացի Տիլըն Տենիսի դէմ: Այս մենամարտը պարզ մրցում մը պիտի չըլլայ, այլ միջին կշիռի տիտղոսի համար պիտի ըլլայ:

Մրցաշարքը տեղի պիտի ունենայ Լաս Վեկասի մէջ, ուր Նախապէս Ծառուկեան «Ռաֆ 11» մրցաշար-



քին Միլուոքիի մէջ կէտերով պարտութիւն կրած էր Զուլի Զովինկընէն:

«Պեթմեն» Ծառուկեան, որ Նախապէս կը կոչուէր Ախալքալաքից (Նկատի ունենալով իր ծննդավայրը, այս ձեռի մրցաշարքերու իրմէ ծանր մրցակիցներու դէմ մրցելով կը դժուարացնէ իր մենամարտը: Զովինկըն 77 քկ կշիռ ուներ, իսկ այժմ Տիլըն Տենիս 82 քկ կշիռ, որ բնականաբար աւելի դժուար կրնայ ըլլալ 70 քկ Արմանի համար:

ԹԵՆԻՍ

ԱԼԻՆԱ ԶԱՐԱՅԵԱՆ ՅԱՂԹԵՅ ՍՈՖԻԱ ԲԵՆԻՆԻՆ


Զայաստանի ներկայացուցիչ Ալինա Զարայեա յաջողութեամբ սկսաւ Մեւիկ «Ջորեա Օփըն» թենիսի աղջկանց մրցաշարքը:

Առաջին հանգրուանին, Զարայեա, որ 121-րդ թենիսփուլմըն է, պարտութեան մատնեց թիւ 106 դասուած Սոֆիա Բենինը:

Զարայեա առաջին սեթին պարտուեցաւ 6-3 արդիւնքով, բայց կրցաւ թայ-պըյըով յաղթել երկրորդ սեթին 7-6 (7-4) եւ որոշիչ սեթին 6-4 արդիւնքով յաղթելով հասնիլ Բ. հանգրուան:

Բենին 2020-ին ընտրուած էր տարուան լաւագոյն թենիսփուլմըն՝ 21 տարեկանին յաղթելէ ետք Աստորալիոյ թենիսի բաց մրցաշարքին՝ հասնելով մինչեւ թիւ 4 դիրք:

Բ. հանգրուանին Զարայեա պիտի մրցի թիւ 6 դասուած Աննա Պոնտարի դէմ (Ռումանիա), որ աշխարհի թիւ 69-ն է: Այս յաղթանակը կարելոր է Զարայեայի համար՝ յաւելեալ կէտեր շահելու եւ բարձրանալու ընդհանուր դասաւորման մէջ:



Մեւիկ մրցաշարքին պիտի մասնակցէր նաեւ Էլիսա Անսենեան, որ սակայն վիրաւոր ըլլալուն պատճառով ջաշուած էր մրցաշարքէն: Նշենք, որ Անսենեան վերջերս Սան Փաուլոյի թենիսի մրցաշարքին պարտուած էր իր ազգակից Զարայեայէն եւ մրցումին ընթացքին վիրաւորուած էր:

ՄՈՒՐԻՆԻՈ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ Ե
ԻՐ ԸՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Անցեալ շաբաթավերջին պարտուելէ ետք Մաուրիս քաղաքի տերապի մրցումին, Ռեալ Մատրիտի փորթուգալցի մարզիչ Ժոզէ Մուրինիօ անգամ մը եւս վերադարձած է իր «հին սովորութիւններուն»՝ քննադատելով իրաւարարը:

Ըստ իրեն, մրցակիցներ Զորիսիան Ռոմերօ եւ Լի Զանկ-Իս պէտք էր կարմիր քարտեր ստանային, վիրաւորելէ ետք Ռեալ Մատրիտի մարզիկներ:

Պետք է նշել, որ Ռեալ Մատրիտի խմբապետ ուրուկուէյցի Ֆետերիքօ Վալվերտէ իրապէս վիրաւորած էր Լիի կարծիքը ֆաուլէն ետք, բայց ասիկա ըսել չէ, որ իրաւարարը չի սխալիր:

Մուրինիօ Նոյնիսկ զարմացած էր, որ օրուան 41 տարեկան իրաւարարը մէկ շաբաթ առաջ յայտարարած էր իբրեւ մրցումին իրաւարար, եւ ոչ թէ 24 ժամ առաջ, ինչպէս կը պատահէր: Ան Նոյնիսկ միջազգային իրաւարարներու ցանկին մաս չէր կազմեր, վըստահաբար բաւարար փորձառութիւն պիտի չունենար այսպիսի կարեւոր մրցում մը ղեկավարելու եւ պարզապէս պիտի ազդուէր Աթլետիքոյի համակիր-



ներուն ճնշումէն:

Մուրինիօ, որ 2010-էն 2013 մարգած էր Ռեալ Մատրիտը, կը կարծէր, թէ «Լա լիկա»-ն «բարեփոխուած» պէտք էր ըլլար 13 տարի ետք, բայց ըստ երեւոյթին «Նոյնն է»:

ՃԻՏԱՆ. «ԹՈՒՐԵԻԱՆ ՈՒ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆՔՆԵՐԸ Կ’ԱԶԱԿՅԻՆ ՊԱԶՈՒԻ ԵՒ ԵՐԵԻԱՆԻ ՄԻՋԵՒ ԽԱՂԱՂ ԶՈՒՈՎՈՅԹԻՆ»

Թուրքիան ու Միացեալ Նահանգները կ’աջակցին Ազրայէճանի եւ Զայաստանի միջեւ խաղաղ հոլովոյթին, ինչպէս նաեւ բոլոր ջանքերը կը գործադրեն Կովկասի եւ Սեւ Ծովու մէջ լարուածութեան սրման վտանգները նուազեցնելու համար: Այս մասին Նիւ Եորքի մէջ «Թուրք-ամերիկեան յարաբերութիւնները 100-ամեակի շեմին» կլոր սեղանի նիստի ընթացքին յայտարարած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Յաքան Ֆիտան: Այս մասին կը հաղորդեն ազըրպէճանական լրատուամիջոցները:

Ֆիտան իր խօսքին մէջ ընդգծած է Անգարայի եւ Ուաշինկթընի համագործակցութեան կարեւորութիւնը համաշխարհային խաղաղութեան եւ կայունութեան պահպանման համար: Ան անւեցուցած է, որ երկու երկիրներու գործընկերութիւնը նոր կարելիութիւններ կը ստեղծէ շրջանի զարգացման եւ խաղաղութեան պահպանման համար:

Թրքական դիւանագիտութեան պետը նաեւ Նշած է, որ Սեւծովեան շրջանը պետք չէ վերածուի խնդիրներու աղբիւրներու, այլ պետք է դառնայ միջազգային համագործակցութեան հարթակ:

Անդրադառնալով ռուս-ուքրանական հակամարտութեան կարգաւորման՝ ան Նշած է, որ Անգարան կը շարունակէ գործօն կերպով աջակցիլ թե՛ Քիեւի,



թե՛ Մոսկուայի հետ հաղորդակցութիւններուն: «Մենք կ’աջակցինք երկխօսութեան եւ դիւանագիտութեան՝ Ուքրանիոյ մէջ կայուն խաղաղութեան հասնելու համար», Նշած է նախարարը:

Ֆիտան ընդգծած է, որ Ներկայ աշխարհաքաղաքական փոփոխութիւններու լոյսին տակ անհրաժեշտ է արդիւնաւետ հոլովոյթի ձեւաւորում համաշխարհային տերութիւններու եւ յառաջատար շրջանային դերակատարներու միջեւ:

ԷՐՏՈՂԱՆ. «ԹՈՒՐԵԻԱՆ ԵՒ ԶԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿԿՈՂՄ...»

Շարունակում Ա. Էջէն

Ան ողջունած է 8 օգոստոսին Զայաստանի եւ Ազըրպէճանի միջեւ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները՝ զանոնք նկատելով երկու երկիրներուն միջեւ երկարատեւ խաղաղութեան հաստատման նպաստող քայլեր:

Էրտողան այդ հոլովոյթի ներդրման համար շնորհաւորած է Զայաստանի Զանրապետութեան վարչա-

պետ Նիկոլի Փաշինեանը, Ազրպէճանի նախագահ Իլհամ Ալիեւը եւ Միացեալ Նահանգներու նախագահ Տաւըլտ Թրամփը:

Խորայէլի պատուիրակութիւնը Էրտողանի խօսքին ժամանակ լքած է ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի դահլիճը:

ՓԱՇԻՆԵԱՆՆ ՈՒ ԷՐՏՈՂԱՆԸ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ...

Շարունակում Ա. Էջէն

Կողմերը անհրաժեշտ նկատած են առեւտրատընտեսական յարաբերութիւններու խթանման, գործարար շրջանակներու միջեւ կապերու ձեւաւորման, ինչպէս նաեւ Անիի պատմական կամուրջի համատեղ վերականգնման միտումած աշխատանքներու հետեւողական իրականացումը:

Միտքեր փոխանակուած են նաեւ շրջանային հարցերու շուրջ:

Փաշինեան եւ Էրտողան շեշտած են Զայաստանի

եւ Ազրպէճանի միջեւ խաղաղութեան հաստատման փաստը՝ վստահութիւն յայտնելով, որ ան Եական ազդեցութիւն կ’ունենայ շրջանային համագործակցութեան զարգացման գործին մէջ: Այդ պարունակին մէջ, ընդգծուած է ԹՐԻՓԲ նախագիծի իրականացման ու շրջանային հաղորդակցութեան ուղիներու ապաշրջափակման անհրաժեշտութիւնը:

Զանդիպման մասնակցած են նաեւ երկու երկիրներու արտաքին գործոց նախարարները:

ՄԱՍԵՆՆԻԺՈՎ. «ԵՐՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ...»

Շարունակում Ա. Էջէն

գործոց նախարարութեան եւրոպական խնդիրներու բաժանմունքի տնօրէն, Բեւեռեան խորհուրդին մէջ Ռուսիոյ աւագ պաշտօնատար անձ Վլատիսլաւ Մասլեննիքով:

«Երեւանի ուղեգիծը, հաշուի առնելով Եւրոպական Միութեան օրէնսդրութիւնը, չի կրնար մեր մօտ հարցեր չյառաջացնել: Ծիշող այնպէս, ինչպէս Եւրոպական Միութեան Զայաստանի հետ յարաբերութիւններու զարգացման նկատմամբ դիտումաւոր ցուցադրական հետաքրքրութիւնը», ըսած է Մասլեննիքով:

Ան ընդգծած է, թէ հաշուի առնելով Եւրոպական

Միութեան անկեղծօրէն հակառուսական քաղաքականութիւնը, որ ինչքան կ’երթայ, այնքան աւելի շատ կը վերածուի անպայմանագրային եւ յարձակողական տրամադրուած ռազմաքաղաքական պլոքի, անոր իրական մտադրութիւններուն վերաբերեալ պետք չէ պատրանքներ ունենալ:

«Պրիւքսելը երբեք չէ յատկանշուած այլասիրութեամբ: Անոր առաջնահերթ նպատակը բնաւ Զայաստանի տնտեսական բարգաւաճումը չէ, այլ մեր երկրին վնաս հասցնելը եւ սեփական այլ աշխարհաքաղաքական խնդիրներու լուծումը», Նշած է դիւանագետը:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ...

Շարունակում Ա. Էջէն

փոխանցեց վեհափառ հայրապետին՝ Միքին Արեւելքի հետ Վենեզուելայի ունեցած քաղաքական ու տընտեսական յարաբերութեանց առնչուած զարգացումներուն շուրջ:

Ապա, հանդիպման միացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային կեդրոնական վարչութեան անդամ եւ Լիբանանի նախկին նախարար Արթուր Նազարեան:

Դեսպանը վեհափառ հայրապետը իրաւիքեց պաշտօնական այցելութիւն տալու Վենեզուելա:

ՅՈՒԱՍՏԱՆԻ ԴԵՏԱՆԻՆ ԴԵՏ ԶԱՆԴԻՊՈՒՆԸ

Երեքշաբթի, 22 սեպտեմբեր 2026-ին, Պիքֆայայի Սուրբ Աստուածածին վանքին մէջ, Արամ Ա. վեհափառ հայրապետը ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ Յունաստանի դեսպան Տեսփինա Զուբլուր-

ԶԱՄԱՇԽԱՐՅԱՅԻՆ ՎԱՉԲ...

Շարունակում 7-րդ Էջէն

անվտանգութեան ծառայութեան եւ Լիբանանի Կարմիր խաչին հետ, որոնք երաշխաւորեցին ձեռնարկին եւ մասնակիցներուն ապահովութիւնը:

Պէտք է Նշել, որ «Նայիրի ճամբար»-ը Զանքաւանի մէջ 2021-ին Զայկական բարեգործական ընդհանուր միութեան հիմնած անվճար հաւաքակային է, ուր երեխաներուն համար կը կազմակերպուին զուարճալի ժամանց եւ դասընթացքներ: 2020-ի Արցախեան

44-օրեայ պատերազմին փորձառութիւնը վերապրած երեխաներուն ապաքինումը խթանելու համար հիմնուած ճամբարը աւելի ուշ սկսած է նաեւ ամենամտեայ երկօրեայ հաւաքներ առաջարկել երեխաներուն, ի տես Արցախի բռնի տեղահանումէն ետք Զայաստան ապաստանած քաղաքացիներու կարիքներու աճին:

ՀԸԶՊԱԼԼԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ...

Շարունակում Ա. Էջէն

Ամին Շըրրիէն, Զըզպալլայի մէջ քրիստոնեական յարաբերութիւններու պատասխանատու Մոհամետ Խանսայէն եւ Ապտալա Չայիուրէն:

Քննարկուեցան ներկայ քաղաքական իրադարձութիւնները եւ լիբանանեան ներքին կեանքին մէջ արձանագրուած կեցուածքները: Շեշտուեցաւ ներկայ փուլին զգայուն եւ վտանգաւոր ըլլալը, ինչպէս նաեւ ընդգծուեցաւ բոլոր հարցերը բացառապէս երկխօսութեան միջոցով լուծելու անհրաժեշտութիւնը՝ հասարակաց ենթահողեր գտնելու նպատակով: Կարեւոր նկատուեցաւ նաեւ խնդրայարոյց հարցերուն շուրջ տարբեր տեսանկիւնները մօտեցնելը՝ ձգտելով միջին լուծումներու հասնիլ:

Զանդիպումին մասնակիցները քըննարկեցին նաեւ ապահովական կացութիւնը եւ մասնաւորաբար լիբանանեան շրջաններու խրայէլեան բռնազըրաւումն ու անոնց հետեւողական քանդումը: Խորհրդակցութիւնները ընդգըրկեցին տեղահանութեան թղթածրարը, ինչպէս նաեւ տնտեսական եւ ապրուստի դժուար պայմանները: Ժողովականները անդրադարձան այս տագնապներուն ծանրութիւնը լիբանանեան ընկերութեան վրայէն թեթեւցնելու անհրաժեշտութեան:

Զանդիպումին մասնակիցները ընդգծեցին բոլոր կողմերուն միջեւ հաղորդակցութիւնը եւ խորհրդակցութիւնները շարունակելու անհրաժեշտութիւնը:

ՄԱՂԱԹԷԼԵԱՆ. «ԱԶՐՊԷՅՃԱՆ ...»

Շարունակում Ա. Էջէն

«Ազրպէճանը շարունակում է խեղաթիւրել իրականութիւնը եւ միջազգային հանրութեանը հայկական պատմամշակութային ժառանգութիւնը ներկայացնում է աղուանական, ալպանական կամ այլ երկրի: Դա մէկ պատճառ ունի, որպէսզի խուսափի ցեղային զտման պատասխանատուութիւնից: Դրա համար փորձում է վերացնել հայկական հետքը եւ ցոյց տալ, թէ Արցախը երբեք հայկական չի եղել: Այդ հարցում Զայաստանի իշխանութիւնները շարունակում են օգնել, իրենց վարած քաղաքականութեամբ լուռնալ Ալիեւի արիւնտ ձեռքերը եւ օրինականացնել մեր նկատմամբ տեղի ունեցած բռնի տեղահանումը», ըսաւ ան:

Խօսելով Ազգային ժողովին կողմէ ստեղծուելիք քննիչ յանձնաժողովին մասին, որ իբր թէ պիտի քննէ Զայ առաքելական եկեղեցւոյ մէջ ստեղծուած ճգնաժամը՝ Իշխան Սաղաթէլեան յայտարարեց. «Սա եկեղեցին վարկաբեկելու եւ Զայ առաքելական սուրբ եկեղեցու դէմ արշալի շրջանակներում պէտք է դիտարկել: Սա հակաօրինական է, նման յանձնաժողովին մաս կազմելու ցանկութիւն չունենք»:

Անդրադառնալով ընդդիմադիր ուժերու առաջնորդներու, գործիչներու կալանաւորման՝ Իշխան Սաղաթէլեան ըսաւ. «Տեսէք, Նախ՝ ի՛նչ է տեղի ունեցել. ընտրութիւններին մասնակցած երեք հիմնական ընդդիմադիր միաւորների առաջին համարները կամ վարչապետի թեկնածուները գտնուում են անաւտութեան մէջ: Ու ոչ միայն առաջին համարները, վարչապետի թեկնածուները, այլեւ խմբակցութիւնների բազմաթիւ անդամներ, օրինակ՝ մեր գործընկեր Արթուր Սարգսեանը, որը հիմա կարող էր նստած լինել իմ

ՈՒՍՄԱՆ ԱՐԱԳԵԱՆ-ԿՈՄԵՍ ԶՐԱԴԻՐՈՒԵՑԱՒ...

Շարունակում 7-րդ Էջէն

հանդէս կու գայ Մայիցի 17 տարեկանէ վար խումբին հետ: Գերմանական ակումբը զայն կը ներկայացնէ իբրեւ յետապալա: Նոյն պահուն, Աւագեան բաւական կարողութիւններու տէր ըլլալով կրնայ խաղաղ միջնապահ գիծի ձայն կողմը, ինչպէս նաեւ աջ կողմի

յառաջապահ գիծի վրայ Նոյնիսկ:

Յոյսով, որ տաղանդաւոր այս մարգիկը վերջնական որոշում կայացնէ իր ապագային մասին եւ վերադառնայ Զայաստանի ազգային խումբ՝ մեծերու պարագային:

ԲՈՒՈՄՊԻԱ ԶԱՄԱՆՍԱՐԱՆԸ...

Շարունակում 4-րդ Էջէն

հայերու, ցիւրերու եւ թուրքերու միջեւ յարաբերութիւնները, ինչպէս նաեւ Օսմանեան կայսրութեան պատմութիւնն ու ժառանգութիւնը:

Դասարանէն դուրս, Զոլումպիա համալսարանի հայագիտութիւնը կը վայելէ աշխուժ մտաւորական եւ մշակութային համայնքի մը աջակցութիւնը:

MESAAS-ն եւ Զայկական կեդրոնը կը կազմակերպեն դասախօսութիւններ, գիտաժողովներ եւ այլ ակադեմական ծրագիրներ, իսկ Զայ ուսանողական միութիւնը կը նպաստէ յարաբերութիւններու հաստատման եւ հայկական մշակութային կեանքին՝ համալսարանէն ներս:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ԶԱՅՐԸ ...

Շարունակում 4-րդ Էջէն

հարստութիւն մը ժառանգ թողելով հայութեան ներկայ եւ գալիք բոլոր սերունդներուն համար:

Սրբազանը բարձր գնահատած է անոր ազգանուէր գործունեութիւնը: Իր խօսքին մէջ նաեւ գնահատելով «Արարատ Տան» ատենապետ՝ Ժողէֆ Կանիմեանին, անդամներուն եւ ծառայողներուն գործունեութիւնը՝ լուսնճելւսահայ տարեցներուն վերջալուսալին խաղաղ կեանք շնորհելու իրենց

բժախնդիր մօտեցման մէջ, սրբազան հայրը կարեւոր նկատեց «Արարատ-Եւքիճեան» թանգարան եւ հետազօտական կեդրոնի բերած նպաստը՝ հայութեան ազգային, մշակութային եւ կրթական ու դաստիարակչական մարգերուն մէջ, մաղթելով հաստատունութեան եւ անոր յարակից մասերուն անխափան շարունակականութիւն եւ վերելք: